Գ. ԱԽՎԵՐԴՅԱՆԻ ԵՎ Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Գրականության և արվեստի Թանգարանի Գևորգ Ախվերդյանի ֆոնդում պահվում են Ախվերդյանի և Գալուստ Շիրմազանյանի 1857 թ. հետաքրքրական նամակները, որոնց նյութը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների միջև եղած պատմական կապերի հարցն էր։ Այդ հարցը Ախվերդյանին հետաքրքրել էր Կովկասի փոխարքայության ղեկավար շրջաններում քննարկվող այն առաջարկությունների կապակցությամբ, որոնք սպառնում էին վարչական կարգով լիկվիդացնել Թիֆլիսի համքարությունները։

Պատմական ի՞նչ իրավության մեջ էր հրապարակ հանվում այդ հարցը։

Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի բարձրորակ և դյուրագին ապրանքները թափանցելով Անդրկովկաս, այդ պահին սկսել էին արդեն շուկայից դուրս քշել տեղական արհեստավորների արտադրած և տեղական առևտրականների միջնորդությամբ վաճառքի հանվող տնայնագործական ապրանքները։ Այս պահին էր սկզբնավորվում այն շրջանը, որի մասին Վ. Ի. Լենինը գրում էր. «Ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում...»[1]։

Հովանավորելով կենտրոնական նահանգների արդյունաբերողներին, Կովկասի ցարական գաղութարարները տեղական համքարությունների, և առաջին հերթին առևտրական համքարությունների, նկատմամբ պատրաստվում էին որդեգրել սահմանափակման ու հալածանքի ուղղի։ Հատկանշական է, որ երբ 1856 թ. Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու բարոն Նիկոլային, պահանջելով Կովկասի առևտրական համքարությունների լիկվիդացումը, նրանց ղեկավարներին նշավակում էր որպես «անպատասխանատու անձեր, կամ որպես ինչ որ «գաղտնի ընկերությունների» պետեր, որոնք խուսափում են օրենքի ամեն ազդեցությունից», նա գտնում էր, որ առևտրական համքարությունները ոչ միայն պիտի լիկվիդացվեն, այլև հետապնդվեն օրենքի ամենայն խստությամբ[2]։

Կասկած չկա, որ տեղական հին տնտեսաձևերը անկարող էր դիմադրելու Ռուսաստանի և Արևմուտքի կապիտալիստական արդյունաբերությանը և վերջիվերջո պիտի պարտություն կրեր ու չքանար ասպարեզից։ Բայց սա հարցի մի կողմն էր միայն։ Հարցի մյուս կողմն այն էր, որ համքարությունների մեջ միավորված տեղական արհեստավորների ու առևտրականների տրտունջները ու բողոքները այս պահին օբյեկտիվորեն սրվում էին ցարիզմի տարած այն քաղաքականության դեմ, որը, ճանապարհ բացելով Ռուսաստանի արդյունաբերական կապիտալի գաղութային տիրապետության առջև, փակում էր երկրամասի արտադրողական ուժերի ազատ զարգացման ուղիները։ Համքարությունների արտահայտած անբավականությունները սպառնում էին ընդունել ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ արծարծվող ժողովրդական շարժման բնույթ։

Գ. Ախվերդյանը մեկն էր Անդրկովկասի աչքի ընկնող այն հայ գործիչներից, որոնք վճռապես առարկում էին համքարությունների լիկվիդացման կողմնակից բարձրագույր պաշտոնատերերին և ամեն կերպ ջանք գործադրում համոզելու Կովկասի քաղաքական ղեկավարներին, որ այդ կազմակերպությունները տակավին շարունակում են օգտակար դեր կատարել երկրի տրն-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 77։

[2] Ю. Ф. Ахвердов, «Тифлисские амкары», Тифлис, 1883, «Об организации учреждения амкар и их обычаях» վերնագրված տեղեկագիրը, էջ 32 և 34։

տեսության մեջ և որ նրանց լիկվիդացումը տեղական բնակչության շահերի տեսակետից կլիներ սխալ ու վնասակար։ 1857 թ. ընթացքում կազմած մի շարք տեղեկագրերի մեջ, որոնք «О тифлисских амкарах» (Из записок Ю. Ф. Ахвердова) վերնագրով լույս տեսան հապավումներով 1883 թ. Թիֆլիսում՝ հեղինակի մահից 23 տարի անց, Ախվերդյանն աշխատում էր ապացուցել, որ Ռուսաստանում տնտեսական իշխող դերձող և Անդրկովկաս թափանցող կապիտալիստ ապրանքատերերին դիմադրող տեղական համքարությունները դեռ շարունակում են օգտակար լինել արտադրող և սպառող բնակչության համար, ուստի և անհրաժեշտ է, որ նրանք շարունակեն վայելել կառավարության հատուկ պաշտպանություն։ Նրանց, ովքեր պնդում էին, թե համքարությունների վայելած «մենաշնորհները» են սաստկացող թանկության ու սպեկուլյացիայի պատճառը՝ Ախվերդյանը առարկում էր, մատնանշելով, որ թանկության ու սպեկուլյացիայի բուն հեղինակները ոչ թե տեղական մանրածախ ապրանքների համար դին սահմանող արհեստագործ կամ առևտրական համքարություններն են, այլ՝ տեղական կալվածատերերը ու շուկային տիրացող դրսեկ կապիտալիստները ու մեծավաճառ առևտրականները։ Վերացնել համքարությունները, որոնք միաժամանակ կատարում են «դատարանի, կարգապահության տնօրենների, բարքերի ցենզորի, դպրոցի, չունևորներին ապահովողների ու խնամողների և մարդկանց բոլոր պահանջները ոչ թե անվանապես, այլ փաստապես հոգացողների» դեր, կնշանակեր դուռ բացել աղքատության և թշվառության առաջ։ «Հարյուրից հազիվ միայն հինգ կամ տասը մարդ կարող պիտի լիներին շարունակել իրենց անկարոտ ապրուստը. մնացածները հարկադրված կլիներին վարձու բանվոր դառնալ նրանց մոտ (և այն էլ՝ եթե ընդունվելու լիներն աշխատանքի), դատապարտվելով զրկանքների և դրանց հետևանք եղող անբարոյության ու ոճրագործության»։

Վերը հրապարակում ենք Կովկասի փոխարքայության դիվանի դիրեկտոր Ալեքսեյ Կրուզենշտերնի 1857 թ. հունվարի 17-ին Ախվերդյանին ուղղած նամակը, որից տեղեկանում ենք, որ համքարությունների օգտին Ախվերդյանի կազմած տեղեկագրերը չէին կազմվել ինքնաբերաբար, այլ հանդիսանում էին փոխարքայության դիվանի կողմից նրան արված հարցապնդման դատասխաններ։ Փոխարքայության հատուկ հանձնարարությունների պաշտոնյա Ախվերդյանին հղելով համքարությունների մասին փոխարքայության գլխավոր վարչության կից խորհրդի կազմած կանոնադրությունը և այդ խորհրդի անդամներից ոմանց կարծիքները՝ իր նամակում Կրուզենշտերնը փոխարքա Բարյատինսկու անունից «հոգևին հարգելի Յուրի Ֆեոդորովիչին (իմա՝ Գևորգ Ախվերդյանին) խնդրում է հատուկ զեկուցագիր պատրաստել «համքարությունների օգտարար գործունեության մասին»։ «Ես ենթադրում էի,—գրում է այդ նամակում Կրուզենշտերնը — թե խորհրդի անդամների ներկայացրած կարծիքների մեջ բավականաչափ տվյալներ կլիներն համքարությունների կողմից հասարակությանը հասցված վնասի մասին, բայց սխալվեցի։ Եվ այսպես ես դեռ չգիտեմ, թե ում պիտի հանձնարարել այդ կազմակերպությունների նկատմամբ ճշնամարար տրամադրված զեկուցագրի պատրաստումը, սակայն կարծում եմ, որ ի պաշտպանություն համքարությունների կազմվելիք զեկուցագիրը ինքյան կմատնանշի նաև բոլոր այն կշտամբանները, որոնց նրանք ենթարկվում են»։

Ստանալով Կրուզենշտերնի նամակում ձևակերպված առաջադրանքը, Ախվերդյանը ձեռնարկեց նյութեր հավաքել Թբիլիսիի համքարությունների մասին՝ ջանալով լիակատար պատկեր տալ նրանց վիճակի ու կատարած դերի մասին և միաժամանակ հերքել նրանց դեմ եղած մեղադրանքները։ Հակառակորդներից ոմանք համքարություններին համեմատում էին արտոնյալ այն ցեխերի հետ, որոնք իրենց վնասակար կազմակերպություններ վաղուց արդեն լիկվիդացվել էին Արևմտյան Եվրոպայում։ Առարկելով այդ հակառակորդներին՝ Ախվերդյանը շեշտում էր արևմտաեվրոպական այդ կազմակերպությունների և տեղական համքարությունների միջև եղած տարբերությունները։ Շոշափելով համքարությունների առանձնահատկությունների հարցը՝ նա տրամադիր էր վերջիններիս արմատը նշմարել պարսից ժողովրդի պատմական անցյալի մեջ։ Դրանով նա ձգտում էր ցույց տալ այդ կազմակերպությունների կապը և դրական նշանակությունը տեղական ժողովուրդների անցյալում և դրանց դերը այդ ժողովուրդների ընթացիկ կյանքում։ Այս նպատակով է հենց, որ Ախվերդյանը հարկ համարեց կազմել Թիֆլիսի համքարական կազմակերպությունների մեջ գործածական տերմինների և այդ կազմակերպությունների կյանքում հարատևող սովորույթների մի հարցացուցակ և դրանց մասին հավաստի տեղեկություններ խնդրել Պարսկաստանի անցյալին ու ներկային լավատեղյակ Գալուստ Շիրմազան-

3 Վերը նշված տեղեկագիրը, էջ 25 և «Заключение», էջ 3։
4 Տե՛ս վերը, վավերագիր № 1։

յանից, որն այդ ժամանակ վաճառականապետի (թաջիր-բաշու) պաշտոն էր վարում Թավրիզում։ Ախվերդյանին հետաքրքրած հարցերը և դրանց ի պատասխան Դ. Շիրմազանյանի տված պատասխանները, որ հրապարակում ենք ստորև[5], ցույց են տալիս Թիֆլիսի համքարությունների և Պարսկաստանի ասնաֆական կազմակերպությունների միջև եղած որոշ ընդհանրությունները և միաժամանակ նկատելի դարձնում այդ կազմակերպությունների մեջ առկա տարբերությունները։ Շիրմազանյանի հաղորդած ուշագրավ տեղեկությունները գալիս էին ակներև դարձնելու այն իրողությունը, որ և՛ Պարսկաստանում, և՛ Վրաստանում համքարական և քաղաքային պաշտոնները ավելի մեծ չափով էին կախված ֆեոդալական իշխող սիստեմից, քան արևմտաեվրոպական ցեխերն ու քաղաքային ազատ կոմունաները։ Պարզվում է միաժամանակ, որ Վրաստանը և Անդրկովկասը Ռուսաստանի հետ միավորվելուց հետո է միայն, որ համքարական պաշտոնները սկսում են ընտրովի դառնալ և որոշ անկախություն ստանալ քաղաքային վարչություններից։ Ռուսական տիրապետության ժամանակաշրջանում առաջացած փոփոխություններն այնքան նշանակալից էին, որ 1850-ական թվականներին, Շիրմազանյանի ասելով, Թավրիզի համքարությունների մեջ արդեն «նշխարքն ևս չեն երևում» Թիֆլիսի համքարական կազմակերպությունների այն առանձնահատկությունների, որոնց մասին իր նամակում Ախվերդյանը կամենում էր տեղեկանքներ ստանալ Թավրիզի հայազգի թաջիր-բաշուց։

* * *

Ե՞րբ են, հիրավի, սկիզբ առել Անդրկովկասի կամ Պարսկաստանի առևտրական և արհեստավորական համքարությունները կամ ասնաֆությունները։ Այդ մասին մեզ հասած գրական վկայությունները XII—XIII դարերից հեռու չեն գնում։ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորում» և վրաց պատմագրական աղբյուրներում հիշատակություններ կան առևտրական ընկերությունների մասին[6]։ Առևտրական ընկերությունները՝ «օրթաղները» կամ «ուրթաղները»—աչքի ընկնող դեր էին կատարում մոնղոլների մոտ և նրանց առկայության մասին հիշատակություններ կան արդեն Չինգիզ-խանի ժամանակաշրջանից[7]։ Հայտնի է նաև, որ իլխանների օրերից ի վեր Իրանում արհեստավորների և առևտրականների հարկումը կատարվում էր համքարությունների միջոցով. ավելի ուշ՝ հարկերը բաշխվում էին համքարությունների վրա և գանձվում բյադխուդաների, ուստաբաշիների և թաջիր-բաշիների միջոցով[8]։ XIV դարի ուղեգիր Իբն-Բատուտայի վկայության համաձայն Սպահանում ու Շիրազում արտադրական կազմակերպություններն ունեին իրենց առանձնանշանները (թամգաները), իրենց գլխապետերը, ժողովատեղիները, խնճույքներն ու տոնակատարությունները։ Նրանք ունեին իրենց գանձարկղները, որոնք հավանորեն ծառայում էին համքարության անդամների փոխօգնության նպատակներին[9]։

Հայ արհեստավորական և առևտրական միությունների մասին մինչ այժմ մեզ հայտնի եղած վկայությունները ավելի հին չեն։ Պեղումները և Մ. Գոշի «Դատաստանագրքի» որոշ հոդվածները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու միջնադարյան Հայաստանի արհեստագործության մի քանի ճյուղերի մեջ աշխատանքի բաժանման, աշխատանքի վարձատրության և արհեստավորների նյութական պատասխանատվության հետ կապված որոշ երևույթներ[10]։ Սակայն առևտրական գների նորմավորման կամ արհեստավորների վարձատրման մասին վկայություններից դեռ չի կարելի հետևություններ անել համքարական կազմակերպությունների առ-

---

[5] Հմմտ. № № 2, 3 և 4 վավերագրերը։

[6] Ш. А. Месхия, Города и городской строй феодальной Грузии, Тбилиси, 1959, էջ 66, 68, 331։

[7] B. Spuler, Die Mongolen in Iran, Berlin, 1955, էջ 432։

[8] С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказьи, ч. II. Городские цехи. Казань, 1891, էջ XLI և հտ. և Н. А. Кузнецова, Материалы к характеристике ремесленного производства в иранском городе XVIII—начала XIX вв., (տե՛ս Сборник «О генезисе капитализма в странах Востока», М., 1962, էջ 346)։

[9] А. Ю. Якубовский, Феодальное общество в Средней Азии (X—XV вв.), т. I, Л., 1933, էջ 51։

[10] Տե՛ս, օրինակ, Ստ. Մնացականյանի «Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցերը և քարագործ վարպետների նշանագրերը» շատ հետաքրքրական հոդվածը («Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 84 և հտ.)։

կայության մասին։ Ուշադրության արժանի է, սակայն, որ Գոշի մոտ հանդիպում ենք թագավորներին և իշխաններին ուղղված դրական ցուցում այն մասին, որպեսզի նրանք բնակիչների հարկումը կատարեն «ընդ արհեստի և կամ ընդ վաճառի»[11]։ Այս նշանակում է, որ Անդրկովկասում հարկման այս եղանակը գոյություն ուներ տակավին մոնղոլներից առաջ, որով և նոր վկայություն կունենանք այն ենթադրության օգտին, որ Անդրկովկասում համբարություններ գոյություն ունեին տակավին XII դարում։ Այնուամենայնիվ Գոշի «Դատաստանագիրքը» հիմք չի տալիս ասելու, թե միջնադարյան Հայաստանի կամ Անդրկովկասի քաղաքներում գոյություն ունեցած հասարակական այդ կազմակերպությունները հանդիսանում էին ֆեոդալական իշխող կարգերին ակտիվորեն դիմադրող միություններ։ Գոշի մատակարարած նյութերից մենք տեղեկանում ենք սոսկ այն մասին, որ իրենց հսկիչների («կոփիչների») միջոցով Անդրկովկասի և Հայաստանի իշխողները միջամտում էին քաղաքներում ու ավաններում գործադրվող չափ ու կշիռների, ինչպես նաև ապրանքագների ու մաքսերի սահմանմանը՝ պատժելով ու սաստելով իրենց կարգադրությունները խախտողներին[12]։ Այնուհետև ուշադրավ է, որ լայն սպառման մթերքների ու արտադրանքների մասին կարգադրություններ անողներին Գոշը հրահանգում էր հաշվի առնել «գավառապետների» և հասարակական կազմակերպությունների ղեկավարների («ժողովրդապետների») շահերն ու պահանջները, «իսկ զգին հացի և զգինւոյ և զայլոց այսպիսեաց ըստ քաջարերութեան ամի կամ ըստ այլ իմիք պատճառի, նմանապես ըստ նուազութեան և ըստ այսպիսեացդ պատճառի փոփոխել ի վեր և ի խոնարհ թագաւորաց լիցի հրամանաւ և իշխանաց՝ յիշատակելով գաւառապետաց և ժողովրդապետաց»,—գրում է Գոշը[13]։

XIII դարի հայկական աղբյուրներից տեղեկանում ենք առևտրական ու արհեստավորական կազմակերպությունների հետ կապված արհեստավորական և առևտրական երիտասարդական «եղբայրությունների» մասին։ «Եղբայրություններն» ունեին իրենց փոխօգնության դանձարկղները, զբաղվում էին անդամակցողների կրոնա-բարոյական դաստիարակության գործերով և ունենում էին կենցաղային սպասարկման իրենց հավաքույթներն ու հանդիպումները։ Իրենց ղեկավար տասնապետներով և «մանկտավագ» կոչված իրենց ընդհանուր ղեկավարների գլխավորությամբ նրանք հանդես էին գալիս նաև որպես մարտական-քաղաքական կազմակերպություններ, որոնք ծառայում էին երկրի պաշտպանության գործին կամ կարավանային ուղեղնացության ժամանակ զենքով դիմադրություն ցույց տալիս հանդիպած «բռնավորներին» կամ դարանամուտ ավազակախմբերին[14]։ Չի սխալվում Լ. Խաչիկյանը, երբ մատնանշում է այդ «եղբայրությունների» նմանությունը մոնղոլական բռնություններին դիմադրող փոքր-ասիական «ախի» կոչված եղբայրությունների հետ, որոնց մասնակցում էին նաև երիտասարդ քրիստոնյաները։ Երզնկայի եղբայրությունը ևս բացարկում էր ազգային և կրոնական խտրականություն. «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մեջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն դասել և զլռել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին և յիմաստութենէ շահեսցին՝ առանց հակառակութեան»[15]։ «Ախի» կամ «ֆուտուվվաթ» կոչված այդ եղբայրությունները XI—XIV դարերում տարածված էին Միջին Ասիայում և Իրանում և դարձյալ կապված են եղել համբարական միությունների հետ։ «Ախի»-ների պես նրանք ևս ատելություն էին տածում բռնակալների նկատմամբ[16]։ Փոքր-ասիական «ախի»-ները սկիզբ էին առել Միջին-ասիա-

11 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, II, հոդվ. 1 (էջ 314)։

12 Գոշ, II, հոդվ. 123 և 124։

13 Նույն տեղում, հոդվ. 123։

14 Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «եղբայրություն» (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, № 12, էջ 73 և հտ. և Աշոտ Հովհաննիսյան Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1957, գիրք I, էջ 421 և հտ.)։ Սեզ թվում է, որ առևտրական կարավանագնացության ժամանակ «ավազակների» կամ «բռնավորների» հետ հաճախ տեղի ունեցող դինարախությունների մասին է վկայում Հին Ջուղայի գերեզմանատանը հանդիպող «զինվոր Մանուկի» 1573 թ. այն տապանաքարը, ուր նշված է, թե այդ «զինվորը» գոհվել էր, երբ հեռաստանից վերադառնալիս պաշտպանվելով հարձակում գործողներից «նետաձիգ արար զօրքն և յոյժ յաղթեանց զինվոր թշնամին» (տե՛ս С. В. Тер-Аветисян, Город Джуга, Тифлис, 1937, էջ 194)։

15 Լ. Խաչիկյան, նշվ. հոդվ., էջ 78։

16 А. К. Боровков, К истории братства «ахи» в Средней Азии. Տե՛ս «Академику В. А. Гордлевскому к 75-летию». Сборник статей, М., 1953, էջ 87 և հտ.։

կան և իրանական այս կազմակերպություններից[17]։ Աչքի առաջ ունենալով XIV—XV դարերում Հայաստանի քաղաքներում գոյություն ունեցած «ըստ աշխարհի եղբայրութեան» տեսակները՝ «Լուծմունք գրոց Մեկնութեան Յովրա» իր հարց-պատասխաններից մեկում Գր. Տաթևացին դրանց տարբերանշում էր նախ «լեզուաւ, երկրորդ՝ քաղաքաւ, երրորդ՝ ուսմամբ, չորրորդ արուեստիւ»[18]։ Այս հիման վրա պիտի կարծել, որ XIV—XV դարերում Հայաստանի քաղաքներում կային տարբեր ազգությունների պատկանող «եղբայրություններ», որոնք զանազանվում էին միմյանցից ըստ մասնագիտության ու արհեստի։ «Եղբայրությունների» տարանջատումն ըստ ազգությունների նշան է ազգային-կրոնական խտրականության սաստկացման, որ հատկանշական է Առաջավոր Ասիայի համար հատկապես XIV դարից սկսած։

Անհավանական չէ, որ խոսելով «եղբայրությունների» մասին Տաթևացին նկատի ուներ արհեստավորական համքարությունները։ Ըստ երևույթին նույն համքարությունները ուներ աչքի առաջ նաև Տաթևացու աշակերտ Մատթեոս Ջուղայեցին, երբ Հայաստանի քաղաքներում եղած «կարգավորությունները» թվարկելիս հիշատակում է քաղաքային «վերակացուներին» և «արուեստավորներին»[19]։ «Գործք Առաքելոցի» մեկնության միջքաղաքային արուեստավորները (իմա՝ արհեստավորների—Ա. Հ.) հետ մեկտեղ նրանց «վերակացուներին» նշելիս Ջուղայեցին նկատի ուներ համքարությունների գլխապետներին, որոնք կոչվում էին նաև «կոգպետներ»[20]։

Համքարական կազմակերպությունների սերտաճումը ֆեոդալական պետության հետ վկայված է նաև հետագա ժամանակների համար։ Սեֆևիների ժամանակ Սպահանի համքարների ուստաբաշիները հաստատվում էին շահի հրամանով։ Իրենց հերթին ուստաբաշիները ձգտում էին ժառանգական դարձնել իրենց պաշտոնը։ Քաղաքային իշխանությունների կարգադրություններից ելնելով, նրանք էին որոշում համքարություններից դանձվելիք հարկերի ու տուրքերի ընդհանուր գումարը և դրա բաշխումը արհեստավորների վրա։

XVII—XVIII դարերում նույն երևույթը տեղի ուներ նաև Վրաստանում։ Ուստաբաշիները նշանակվում էին վրաց թագավորի կողմից[22], թագավորը միջամտում էր համքարությունների կարգադրություններին, թույլ չտալով, որ այդ կազմակերպությունները գլուխ բարձրացնեն իշխող դասերի դեմ[23]։ Հատկանշական է, որ Վրաստանում համքարությունները պահպանել են իրենց բազմազգ բնույթը։ Նրանց կանոնադրությունների մեջ նկատելի չէ կրոնական խտրականություն։ Նրանց մեջ կենդանի էին անցյալից եկող կրոնա-բարոյական նորմերը. նրանք ունեին իրենց «սրբերի» պաշտամունքը և կրոնական բնույթի ծիսակատարություններ ու պարտավորություններ։ Վրաստանի համքարությունները ևս ունեին իրենց դրոշակները, որոնց վրա դրոշմված էր լինում համապատասխան արհեստի խորհրդանշաններ կամ արհեստը հովանավորող սրբի պատկերը։ Ուշագրավ է, որ Էջմիածնի տաճարի մուտքի մոտ պահված է 1682 թ. մի արձանագրություն, որի համաձայն Թիֆլիսի հայ «ասնաֆները» և «դուքանդարները» պատավորություն են ստանձնում տարեկան որոշ քանակության մոմ հայթայթել Էջմիածնի միաբանությանը[24]։ Խոր անցյալից էին գալիս նաև Վրաստանի համքարությունների ռազմական պարտավորությունները։ Վրաստանի համքարությունները ունեին իրենց ջոկատները, որոնք «յուզբաշիների» ղեկավարությամբ մասնակցում էին պատերազմին։ XVIII դարի կեսերին Հերակլ II-ի հրամանով Թիֆլիսի շուրջն ավելի քան 3000 լավ զինված արհեստավոր ու առևտրական երիտասարդներ գիշեր ու ցերեկ պահակային պարտավորություններ էին կատարում՝ քաղաքը պարսիկներից պաշտպանելիս։ Թիֆլիսում նման ջոկատներ կային նույնիսկ XIX դարի կեսերին[25]։

Ինչ են ցույց տալիս Վրաստանի ու Պարսկաստանի առևտրա-արհեստավորական համքարությունների մեջ եղած այս ընդհանրությունները։ Մինչդեռ միջնադարյան Եվրոպայում արհես-

---

17 В. А. Гордлевский, Государство сельджуков в Малой Азии. М., 1941, էջ 106։

18 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5732, թ. 153ա։

19 Նույն տեղում, ձեռ. № 1403, էջ 222։

20 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, I, էջ 420։

21 Chardin, Voyage dans la Perse, Paris, 1810, V. 93, հմմտ. նաև Кузнецова, նշվ. աշխ., էջ 345։

22 Месхиа, նշվ. աշխ., էջ 336 և հտ.։

23 Նույն տեղում, էջ 332։

24 Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, ՍՊբ, 1913, էջ 195։

25 Месхиа, նշվ. աշխ., էջ 386. հմմտ. նաև А. Г. Пирцхалайшвили, К истории выступления тбилисских амкаров в 1865 г. (журн. «Исторические записки», 1940, էջ 211 և հտ.)։

տավորական և առևտրական միավորումները առաջ էին գալիս որպես «ֆեոդալների միավորված ավազակության դեմ ուղղված կազմակերպություններ»[26], որոնք ձգտում էին ոչ միայն ազատագրվել ֆեոդալների իշխանությունից, այլև նրանցից իրենց քաղաքային վարչության դեկը. Մերձավոր Արևելքի համքարական կազմակերպություններն այս կամ այն չափով գործիք էին դառնում ֆեոդալ իշխանավորների ձեռքին»[27].

Պարսկաստանի քաղաքներում իլխանների օրոք արհեստավորների կազմակերպություններն ընդգրկում էին ոչ միայն ազատ արհեստավորներին, այլև ստրուկներին»[27]. Հետագայում ոչ միայն Պարսկաստանում, այլև Վրաստանում թագավորական իշխանության գոյության շրջանում համքարությունների մեջ կազմակերպված արհեստավորների և առևտրականների մի մասը ճորտական կախում ուներ իշխող ֆեոդալներից[28].

Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների զարգացման այս ընդհանրություններն վերջին հաշվով պայմանավորված էին մոնղոլների տիրապետության ժամանակներից ի վեր և մինչև XIX դարի սկիզբները տեղական ժողովուրդների պատմական զարգացման առանձնահատկությամբ. XIII—XIV դարերից ի վեր արևմտաեվրոպական որոշ ժողովուրդների զարգացումը սկսում էր դնալ առաջընթաց ուղղությամբ՝ դրական նախապայմաններ ստեղծելով կապիտալիստական կացութաձևի առաջացման և ֆեոդալական հարաբերությունների լիկվիդացման համար. Սրա հետ մեկտեղ ցեխային կորպորացիաների զարգացումն Արևմուտքում ևս անցել է տարբեր կեռմաններով և արտաքնապես շատ նմանություններ ցուցաբերել ասիական համքարությունների հետ. Արևմտաեվրոպական քաղաքների արհեստավորական կորպորացիաները առաջ էին եկել XII—XIII դարերում, ծայր առնելով ֆեոդալական ագարակների, քաղաքային ինքնագլուխ արհեստավորների կամ հողևոր «եղբայրությունների» ընդերքից և միավորելով իրենց հետ առևտրով զբաղված դիլդիներից դատված արհեստավորներին. Պայքարի մեջ մտնելով ֆեոդալների դեմ, նրանք մերթ ճնշվում էին, մերթ ճանաչվում վերջիններիս կողմից. XIV դարում մեծ ուժ ստացած այդ կորպորացիաները ոչ միայն ճանաչվում էին քաղաքային վարչությունների կողմից, այլև այսպես կոչված «ցեղային հեղափոխությունների» միջոցով որոշ վայրերում տիրանում քաղաքային վարչությունների (կոմունաների) դեկին. Հետագայում նրանք զրկվում են իշխող դիրքից և քաղաքային վարչությունների տերերի կողմից օգտագործվում հարկային, վարչական, ռազմական նպատակներով. Հատկանշական է, որ Արևմուտքում ևս ցեխերի ձեռք բերած վարչական իրավունքը երևան էր բերում տենդենց՝ ստանալու ժառանգական բնույթ[29].

Թուրք-թաթարական տիրապետության սկզբնավորումից ի վեր Առաջավոր Ասիայի ժողովուրդների զարգացումը խաթարվում է կերբնթաց ուղեգծից տեղի տալով դեգրադացման ու ճահճացման. Անվերջ պատերազմների և նվաճված ժողովուրդների գիշատիչ հարստահարման ու ճնշման հետևանքով պարբերաբար տեղի էր ունենում արտադրողական ուժերի նվազում, քաղաքների ու ճանապարհների ավերում, ցանքատարածների, այգիների կրճատում, ոռոգման սիստեմի քայքայում, շատ տեղերում երկրագործության ինտենսիվ տնտեսության փոխարինում քոչվորական էքստենսիվ տնտեսությամբ. Ինչպես երկրի ողջ նյութական կյանքը, այնպես էլ արհեստագործությունն ու առևտուրը կախման մեջ էին ընկնում քոչվորական ֆեոդալիզմի իշխող սիստեմից՝ ծայր աստիճանի դանդաղեցնելով կամ խափանելով ժողովրդական տնտեսության զարգացման պրոգրեսիվ տենդենցները. Կանգ առնելով վրաց միջնադարյան քաղաքների վրա՝ սովետական պատմաբան Մեսխիան գրում է. «Քաղաքներում ֆեոդալ արիստոկրատիայի տիրապետությունը, այդ տիրապետությունը տեսական դարձնելու ձիգերը, տնտեսական կյանքում քաղաքների ունեցած մասնակցությունը, բաղարամերձ մարզերի վրա նրանց բանեցրած իշխանությունը, ֆեոդալ արիստոկրատիայի սերտ կապը քաղաքային վերնախավի հետ, այդ վերնախավի և ֆեոդալ արիստոկրատիայի շահերի միավորումը քաղաքաբնակ լայն մասսաների դեմ, մի խոսքով՝ վրաց ֆեոդալական հարաբերությունների մեծ ազդեցությունը քաղաքային կյանքի վրա,—այս է այն հիմնական պատճառը, որ Վրաստանում XII—XIV և հաջորդ դարերում չզարգացավ քաղաքային ուրույն վարչություն, չկազմակերպվեցին միջնադարյան կոմունաների տիպի

[26] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, III, էջ 43 և հտ.։
[27] Рашид-ад-дин, Сборник летописей, М.—Л., 1946, т. III, էջ 300։
[28] Месхиа, նշվ. աշխ., էջ 70, 84, 131, 329։
[29] G. Schmoller, Grundriss der allgemeinen Volkswirtschaft, Leipzig, 1901, I Teil, էջ 404։

«քաղաքային-հանրապետություններ»։ Սակայն բոլոր այս երևույթների միակ արդյունքը չէր սա. դրանց մյուս արդյունքը բաղարների և թագավորական իշխանության դաշինքի քակտումն էր»[30]։

Մինչև XIX դարի սկզբները առաջավորասիական ժողովուրդների և մասնավորապես Վրաստանի ու Հայաստանի համքարությունները էական դեր էին պահպանում վերը բնութագրված իրենց առանձնահատկությունները՝ չսնուցելով զարգացման կապիտալիստական տենդենցներ։ Այնուամենայնիվ զարգացման նախակապիտալիստական շրջանում մշակված այդ առանձնահատկությունները չէին խանգարում, որ անդամ առաջավորասիական համքարությունների ներսում մերթ ընդ մերթ պոռթկային կեղեքվող աշխատավորության տրամադրությունները ցոլարձակող շարժումներ։ Այդպիսի մի շարժում էր, օրինակ, 1571—1573 թվականներին պարսկական արհեստավորների և մանր առևտրականների՝ Թավրիզում բռնկած ապստամբությունը։ Ոտքի ելնելով ադրբեջանական նշանավոր կենտրոնի հաքիմի դեմ՝ այդ թվականներին ապստամբները իրենց ձեռքն էին առել Թավրիզի իշխանությունը և խիստ նեղը լծել իշխող դասերի և իշխող կարգերի ներկայացուցիչներին՝ տեղական իշխաններին ու հոգևորականներին, մեծ վարձագին գանձող խանութատերերին, մայրաքաղաքի վաճառականների և արհեստավորների պետի և շուկայի հսկիչի ու խանութատերերի եկամուտներին հսկող քալանթարին, մեծավաճառ առևտրականներին, վաշխառուներին ու կապալատերերին։

Շուրջ երկու տարի տևած այդ ապստամբությունն այնքան էր ահարեկել պարսից արքունիքին, որ շահ Թահմազ II-ը հարկադրված եղավ առաջիկա մի շարք տարիների համար հրաժարվել ասնաֆների վրա բարդված տուրքերից։ Հետաքրքրական է, որ ապստամբության ժամանակ ղեկավար դեր էին կատարում Թավրիզի «փահլևանները»։ Ապստամբությունը ճնշվելու հետևանքով մահապատժվածների շարքում Իսկանդեր Մունշի պատմագիրը հիշատակում է շատ փահլևանների անուններ և նշում, որ դրանցից առնաձնապես աչքի էին ընկել երկուսը՝ փահլևան Յուրին և փահլևան Ավազը[31]։ Գայթակղվում ենք խորհելու, թե իրանական փահլևանները կատարում էին նույն դերը, որը ժամանակին վերապահվում էր հայկական մանկտավաղներին։

Նկատենք ի դեպ, որ վարը հրապարակված նամակներից մեկում Գ. Շիրմազանյանը ևս հիշատակում է ասնաֆների կողմից իշխանություններին ցույց տրվող ընդդիմությունների և բողոքարկումների դեպքեր, երբ նրանք «կրժողովվեն կերթան մին մեջիտում կամ մուշտեիդի տանն բաստա կը նստեն գիշերներն։ Նա ալլահ կը բղավես, մինչև որ սոցա բողոքին վերահասու լինին, այսինքն տարեկան մալյաթն բիշացնեն»[32]։

Պահպանելով հանդերձ իրենց միջնադարյան առանձնահատկությունները, Անդրկովկասի համքարությունները ևս երկրամասի քաղաքական կյանքում կատարում էին որոշ պրոգրեսիվ դեր. XIX դարի առաջին կեսի ընթացքում այդ կազմակերպությունների ընդերքում հասունանում էր տեղական նախապրոլետարիատն ու նախաբուրժուազիան։ Այդ պահին համքարությունները ոչ միայն չէին հակադրվում երկրամասի կապիտալիստական զարգացման տենդենցներին, այլև դառնում էին ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ տեղական ժողովուրդների մեջ տարերայնորեն խմորվող ազատագրական շարժումների մղիչներից մեկը։ Պատահական չէ, որ երբ 1865 թ. Թիֆլիսում տեղի ունեցավ քաղաքային համքարությունների ապստամբությունը, դրան արձագանքողներից մեկը եղավ Գերցենի «Колокол»-ը։

Ախվերդյանի և Շիրմազանյանի նամակները հետաքրքրական նյութեր են մատակարարում Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների ու քաղաքային վարչության օրգանների պատմության համար։ Մասնավոր ուշադրության արժանի են այն տեղեկանքները, որ տալիս է Շիրմազանյանը պարսկական տիրապետության ժամանակ Ղարաբաղում նշանակալից դեր կատարած հայ ինքնագլուխ մելիքների մասին։ Իր երկրորդ նամակի վերջում նա որպես ականատես տալիս է 1856 թ. Թավրիզում բռնկած ժողովրդական հուզմունքի կենդանի պատկերը, որի նյութը մեզ հիշեցնում է Բաֆֆու՝ Թեհրանում դիտած «Խաղ-Փուշը»։ Շիրմազանյանը հարցասեր դիտող է, թեպետև նրա տեսողությունը սահմանափակված է իշխողների դիրքերը պաշտպանող ուսումնասիրողի աչքակալով։ Նա արհամարհում է խաժամուժ ամբոխի արդար գայրույթը, թեկուզ և,

30 Месхиа, նշվ. աշխ., էջ 77։

31 И. П. Петрушевский, Восстание ремесленников и городской бедноты в Тебризе в 1571—1573 гг. «Сборник статей по истории Азербайджана», Баку, 1949, вып. I, էջ 221 և հտ.։

32 Տե՛ս վարը, վավերագիր № 4։

իհարկե, դեռ չէր կարող գուշակել, որ տարիներ անց, 1865 թ. Թիֆլիսում որպես կովկասյան մայրաքաղաքի քաղաքագլուխ անձնապես ինքն իսկ պիտի դառնար հազարավոր համքարների ատելության նշանախնդիր ու ճաշակեր նրանց տարերային ցասման ողջ դառնությունը[33]։

* * *

Իր «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր» բովանդակալից հետազոտության մեջ, կանգ առնելով անցյալ դարի 50-ական թվականներին Գ. Ախվերդյանի և նրա հետ միաժամանակ հանդես եկած Պ. Շանշյանի աշխատությունների մեջ արտացոլված հայացքների քննության վրա, տնտեսագետ Զուրարյանը նրանց բնութագրում է որպես «հայ դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչների»։ Մասնակցելով «կապիտալիստական տնտեսության և հին տնտեսական ձևերի միջև արծարծված պայքարին և դրանից առաջացած» հին, միջնադարյան կարգերի և նոր բուրժուական կարգերի կողմնակիցների միջև առաջացած հակամարտությանը, գրում է Զուրարյանը, նրանք հանդես եկան հին տնտեսական ձևերի համքարությունների և դրանց համապատասխանող հին տնտեսական կարգերի պաշտպանների դերում[34]։

Շանշյանը ու նմանները, գրում է Ս. Զուրարյանը մի այլ տեղ, ըստ էության տարվում էին «մանր-բուրժուական ռոմանտիզմով» և տալիս «միջնադարյան տնտեսական ձև հանդիսացող արհեստավորական համքարությունների իդեալիստական պատկերացում»[35]։ Գրեթե նույն այս գնահատականն են տալիս Ախվերդյանի և Շանշյանի տնտեսագիտական հայացքներին նաև մյուս հետազոտողները բնութագրելով նրանց, որպես «համքարություններն իդեալականացնող և այդ կազմակերպությունները որպես կապիտալիզմի բերած թշվառություններն ամոքող համադարման նկատող «մանր-բուրժուական» մտածողների»[36]։

Ախվերդյանի և Շանշյանի պաշտպանած տնտեսագիտական հայացքների այսպիսի բնութագրումը ոչ միայն միակողմանի է, այլև հիմնականում սխալ։ Այդ բնութագրությունը հակասում է այն իրողության, որ պաշտպանության տակ առնելով համքարությունները, նրանք ոչ միայն սկզբունքորեն չէին հակադրվում կապիտալիզմին, այլև, առերևութորեն «հակասելով» համքարությունների օգտին իրենց արծարծած տնտեսագիտական տեսությանը, երկու ոտքով կանգնած էին „laissez faire, laissez passer" բուրժուական լոզունգով պաշտպանված տնտեսական լիբերալիզմի դիրքերի վրա[37]։

Մասնավորելով իր խոսքը Շանշյանի մոտ հանդիպող այդ լոզունգի նկատմամբ, Զուրարյանը գրում է. «Շանշյանը տվյալ դեպքում անձնավորում էր էպոխայի այն դասակարգի (կալվածատիրության) հակասությունը, որին նա ինքը պատկանում էր, երբ մի կողմից ազնվականությունը բուրժուականանում էր, իսկ մյուս կողմից հինը քաշում էր նրա ոտից։ Այդ պատճառով Շանշյանը ձեռնամուխ էր լինում պաշտպանելու միմյանց հակադիր տնտեսական կարգեր՝ մի կողմից միջնադարյան արհեստավորական համքարությունները, մյուս կողմից՝ բուրժուական ձեռնարկատիրության և տնտեսական գործունեության ազատությունը»[38]։

Մի կողմ ենք թողնում այն հանգամանքը, որ այս տողերի մեջ գրեթե հետք չի մնում վերը հիշատակված 50-ական թվականների «հայ դեմոկրատական ինտելիգենցիայի» «մանր բուրժուական ռոմանտիզմից», և Շանշյանի (կամ Ախվերդյանի) տնտեսագիտական «հակասությունների» բացատրության փոխարեն ստացվում է տրամաբանական փակուղի։

Փաստորեն և՛ Ախվերդյանը, և՛ Շանշյանը դիմադրավում էին ոչ թե Կովկասի տնտեսական զարգացման կապիտալիստական հեռանկարներին, այլ այն վտանգին, որ սպառնում էր այդ երկրի կապիտալիստական զարգացման ներքին հնարավորություններին ուս և արտաքսման կապիտալիստներից։ Չի կարելի Ախվերդյանի և Շանշյանի տնտեսական հայացքների վեր-

33 Տե՛ս Պ. Պողոսյան, Երկերի ժողովածու, Երևան, 1954, հատ. 3, էջ 583 և հտ.։

34 Ս. Հ. Զուրարյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, էջ 279 և հտ.։

35 Նույն տեղում, էջ 291։

36 Х. Г. Гуланян, Очерки истории армянской политической мысли, М., 1955. էջ 142 և Месхиа, նշվ. աշխ., էջ 330 և հտ. և էջ 351։

37 Ս. Զուրաբյան, նշվ. աշխ., էջ 283 և 287։

38 Նույն տեղում, էջ 288։

ությունը մեկուսացնել նրանց քաղաքական հայացքների վերլուծությունից։ Չի կարելի անտիտանալ, որ XIX դարի հայ տնտեսագիտական մտքի արտահայտիչներ լինելուց առավել Ախվերդյանն ու Շանշյանը հանդիսանում էին հիմնադիրներ և պարագլուխներ կովկասահայ այսպես կոչված «ազգային-պահպանողական» մի ամբողջ հոսանքի, որի գաղափարախոսությունը, հասարակական պրակտիկան անհնար է տեղադրել «մաքուր բուրժուական տնտեսագիտության» նեղ պատյանի մեջ[39]։

Ելնելով համքարությունների հետ կապված առևտրական կապիտալի անմիջական շահախնդրությունից՝ Ախվերդյանն ու Շանշյանը ձեռք էին մեկնում համքարությունների մեջ կազմակերպված արհեստավորությանը՝ ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ համաժողովրդական ճակատ ստեղծելու նպատակով։ Նրանք ներկայացնում էին տեղական առևտրականների ոչ միայն տեղական բոլոր համքարությունների ընդհանուր շահ, այլև ցարիզմի գաղութային քաղաքականությանը հակադրված ոչ միայն տեղական համքարությունների, այլև կովկասյան բոլոր ժողովուրդների համերկրային շահ և մասնավորապես այլև հայ ժողովրդի համազգային շահ։ Իրենք մանր-արհեստագործության պատվանդանի վրա կուտակվող առևտրական կապիտալի գաղափարախոսներ՝ նրանք բուն էության հակադրվում էին ոչ թե Կովկասի կապիտալիստական զարգացման հեռանկարին, այլ պարզապես մտահոգված էին այն մասին, որպեսզի Կովկասի (և մասնավորապես նրա հայաբնակ գավառների) կապիտալիստական զարգացումը չկատարվի սոսկ երկիրը տնտեսապես նվաճող ցարական գաղութարարների և նրանց ետևը կանգնած կալվածատերերի ու արդյունաբերողների օգտին։ Ժողովրդական մասսաների պաուպերացման նրանց կանխահոգությունները հակադրվում էին ոչ թե տեղական կապիտալիզմի զարգացման հեռանկարներին, այլ՝ ցարական գաղութարարների հովանավորած արդյունաբերողներին ու իրենց շահախնդրություններով դրանց հետ միաձուլված տեղական առևտրականներին ու ռանտյեներին։ Նրանց գործունեությունն ուղղված էր Կովկասի արտադրողական ուժերի զարգացմանը տեղական կապիտալիստների ձեռքերով նպաստելու նպատակակետին։

«Ազգային-պահպանողականները» դիմագիր դիրք ունեին ցարիզմի գաղութային քաղաքականության հանդեպ ու վերին աստիճանի զգայուն էին այդ քաղաքականությունից տուժող ոչ միայն առևտրական, այլև արհեստավորական հասարակաշերտերի նկատմամբ։ Հատկապես Ախվերդյանը «ազգային-պահպանողականների» մեջ առավել ազդեցիկ ու հեղինակավոր այն գործիչն էր, որ ամենից ներթափանցող միտքն ուներ համքարական մասսաների վերապրած տագնապը հանրակողմանորեն ընկալելու և նրանց կացություն մեղմացնող հնարներ որոնելու համար։

Ախվերդյանի «ազգային-պահպանողականությունը» չպետք է պատկերացնել որպես ազգային հնավանդ հիմնարկների ու պատկերացումների պաշտամունք կամ ազգային անշարժության մեծարանք։ Չէր սխալվում Ղ. Աղայանը, երբ իր հիշողություններից մեկում հանդես բերելով Ախվերդյանին, նրան բնութագրում էր որպես ժամանակի ազգային-ազատագրական գաղափարներով տոգորված լուսամիտ ու առաջամիտ մի անձնավորություն։ Աղայանը նրա բերանում դնում է այսպիսի խոսքեր. «Մենք մեր աչքով տեսնում ենք, թե հայերենն ու վրացերենը ինչպես են դուրս մղվում մեր տղետ կանանց բերաններից, մեր տներից։ Այսքանը բավական է, որ մեր մեջ նախանձ զարթնի, պատվասիրության և ազգասիրության զգացումն և սկսենք դրա առաջքն առնել աղջկանց դպրոցներ բանալով, թատրոն հիմնելով, գրականությունը ճոխացնելով, վերջապես ուրիշ ազգերին մեզ օրինակ, նրանց վարմունքը մեզ համար խոսակցության նյութ շինելով։ Պետք է հետաքրքրվենք և իմանանք, թե որպիսի ճանապարհ ունեն բռնած մեր վիճակում եղող եվրոպական ազգերը, այն ազգերը, որոնք մեռած տեղից զլուխ են բարձրացրել և ազգայնապես ապրելու իրավունք հայտնում։ Նրանք այսօր առաջ են գնում ոչ մեզ նման կուրորեն, այլ գիտակցաբար, մի նախամտածված և նախագծված ուղղությամբ և շատ չի քաշիլ այդ ազգերը կանցնեն առաջնակարգ զորեղ ազգերի կարգը իրենց զարգացումով ու դիրքով»[40]։

Քննադատելով կապիտալիստներին, Ախվերդյանը հակադրվում էր միայն գաղութարարների կողմից մենաշնորհված այն դրամատերերին, որոնք արդելափակելով տեղական արդյունագոր-

39 XIX դարի արևելահայ ազգային-պահպանողական այս հոսանքի մասին, որին սովետական բնթացիկ գրականության մեջ անհուսորեն շարունակում են նույնացնել ռուսահայ կղերա-պահպանողական կամ կղերա-ազգայական ռեակցիոն հոսանքի հետ, տե՛ս մեր «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատությունը, Երևան, 1956, հատ. II, էջ 31—58։

40 Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, Երևան, 1940, էջ 189։

ծության զարգացման ուղիները, «հանուն ազատ արդյունագործության» պահանջում էին լիկվիդացնել տեղական ձեռնարկումներին պաշտպան կանգնող համքարությունները[41]։ Ընդսմին ընդգծենք, որ Ախվերդյանը չէր դիտում համքարությունները որպես մեկընդմիշտ ստեղծված և որևէ փոփոխությունների չենթարկվող կազմակերպություններ։ Նա հայտնում էր միայն այն համոզմունքը, որ համքարությունների «ճանկաբծական ոչնչացումը», առանց դրանք հանրօգուտ և «ժողովրդի հասկացողություններին ու կարիքներին համապատասխանող այլ կազմակերպություններով փոխարինելու, քաղաքաբնակչության մեծ մասի համար անժամանակ բան կլիներ և կառաջացներ ավելի շատ չարիքներ, քան այն, ինչ որ անհիմն կերպով նրանց վերագրվում են»[42]։

Մասսայական թշվառություններն ու ոճիրները կանխող համքարությունների կազմակերպված փոխօգնությունը տեղական առևտրի և արդյունագործության զորեղ հենարան էր համարում նաև Պ. Շանշյանը[43]։ Բայց դարձյալ սխալ կլիներ հետևցնել, թե դրանով նա սկզբունքորեն ժխտում էր կապիտալիզմը։ Շանշյանը մեծարում է Ադամ Սմիթի բուրժուական դասական տնտեսագիտության ուսմունքը, դրվատում մասնավոր սեփականության և «ազատ աշխատանքի» բուրժուական իրավունքը՝ որպես զարգացող առևտրի և արդյունաբերության առաջին պայման, և փառաբանում մանչեստրականության հռչակած ազատամտության սկզբունքը՝ որպես առևտուրն ու արդյունաբերությունը շարժող ու կանոնավորող ուժ։ Նրա կարծիքով համքարությունն այլ ինչ չէ, քան բուրժուական քաղաքատնտեսության զովարանած այդ սկզբունքով ղեկավարվող «առևտրական և արդյունագործական դասակարգ»։ Նա համոզված էր, թե քաղաքակիրթ ժողովուրդների մոտ միայն անձնական շահը կարող է հասցնել զարգացման՝ կազմելով «առևտրական և արհեստագործական ընկերություններ»[44]։ Անցյալ դարի 50-ական թվականների թանկությունը, ասում է Շանշյանը, Ղրիմի պատերազմի հետ կապված համատարած երևույթ էր, որ ընդգրկեց նաև Անդրկովկասը, որչափ վերջինս այդ պատերազմի թատերաբեմերից մեկն էր։ Անդրկովկասում թանկության պատճառ դարձան նաև տեսական չորությունը և հաղորդակցության աննպաստ պայմանները, հանգամանք, որ մատնանշում էր նաև Ախվերդյանը։ Ըստ այդմ Անդրկովկասի համքարությունները ոչ միայն մեղսակից չէին թանկության, այլև իրենք իսկ տառապում էին դրա հետևանքներից[45]։

Շանշյանը ևս հեգնում էր նրանց, ովքեր «մոնոպոլիստ» էին համարում համքարին։ «Մի՞թե մոնոպոլիստին չէ հիշեցնում այս թուլուզչին, որը մինչև ծնկները ցեխի մեջ խրված քշում է իր ձին և երգում վայրագ եռանդով հիացնող Քյոռ-Օղլու ստանները կամ այն մոնոպոլիստ բախկալը, որ յափնջու տակ քնելիս երգում է իր սիրած «Քյոռ-Օղլու մասին մյուս ստանները»[46]։ Բայց նա աչքը չէր փակում նաև համքարական ձեռնարկությունների զարգացման կապիտալիստական տենդենցների վրա։ Ելնելով բուրժուական տնտեսագիտության ընդհանուր սկզբունքներից՝ նա ոչ միայն մեծարում, այլև պաշտպանության տակ է առնում այդ տենդենցները։ «Նախատել մեկին այն բանի համար, որ նա իր կապիտալը փոխ է տալիս չելնելով մարդասիրությունից, կնշանակեր մարդկային օրենքները աստվածային օրենքների հետ շփոթել... Արդյունաբերական և առևտրական կամ ձեռնարկումների ոգով ապրող հասարակության մեջ հասկանալի չեն այն նախատինքները, որ թափվում են մեկի վրա այն բանի համար, որ նա իր կապիտալը չէ թե

---

41 «Капиталисты, не сочувствуя сочетанию начал свободной конкуренции и разделения выгод от труда и промысла, которыми безсознательно управляются члены амкара, желали бы сосредоточить в одне руки некоторые отрасли производительности и торговли, которые, по их взгляду, должны быть весьма прибыльны в Тифлисе; но видя невозможность при настоящем устройстве амкаров, образовать сильную монополию, всеми путями доискиваются его расстройства, и на началах свободы промышленности требуют уничтожения его, как источника монополии, самой пагубной для общественного благосостояния...». Տե՛ս «Тифлисские амкары», «Записка об амкарах в Тифлисе» տեղեկագիրը, էջ 2։

42 Նույն տեղում, «Заключение», էջ 3։

43 Տե՛ս П. Шаншиев, Два слова об амкарах, Тифлис, 1857, էջ 32 և հտ.։

44 Նույն տեղում, էջ 2 և 9։

45 Նույն տեղում, էջ 10 և 28։

46 Նույն տեղում, էջ 18 և հտ.։

մարդասիրության, այլ շահասիրության համար է փոխ տալիս ուրիշին»[47]։ Շանշյանը դրվատում է անդամ համքարների վաշխառուական պրակտիկան։ Համքարների տրամադրած վարկով, ասում է նա, Կախեթի հողագործներն ու այգետերերը հնարավորություն են ստանում մշակելու իրենց հողերն ու այգիները, վճարելու իրենց պետական ու կալվածատիրական տուրքերը։ Առանց համքարական կապիտալի Թիֆլիսի նահանգում չէր լինի ո՛չ արդյունագործություն, ո՛չ երկրագործություն, սրանց կպակսեր աշխատանքը շարժող դլխավոր ուժը՝ փողը[48]։

Համքարների օգտին ունեցած իրենց ելույթներով Ախվերդյանը և Շանշյանը պաշտպանում էին անցյալից եկող մի հիմնարկ, որը չդիմանալով գործարանատերերի մրցությանը, դատապարտված էր անհետացման։ Սակայն չի կարելի շրջանցել այդ ելույթների հասարակական-քաղաքական նշանակությունը։ Պաշտպան կանգնելով տեղական համքարություններին, նրանք օբյեկտիվորեն հակադրվում էին քաղաքական իշխող այն ուղղությանը, որը հետամուտ լինելով ռուս և եվրոպական արդյունաբերողների ձեռքը տալ Կովկասի շուկան, արգելակում էր տեղական ժողովուրդների կապիտալիստական զարդացումը։

*

Ախվերդյանի փաստարկված տեղեկագրերը դրական արձագանք գտան Կովկասի քաղաքական դեկավարների կողմից։ Կարդալով նրա ներկայացրած զեկուցագիրը, իշխ. Ա. Ի. Բարյատինսկին դրա վրա մակագրեց՝ «Կարդալով այս զեկուցագիրը դալիս եմ այն եզրակացության, որ համքարությունների կազմակերպության մեջ ավելի շուտ օդուտ կա, քան անշահավետություն։ Այս վերջինս և համքարությունների չարաշահումները առաջ են դալիս կառավարական հսկողության թերությունից. աչալրջության դեպքում դրանք կարելի է վանել առանց շոշափելու համբարության հիմունքները։ Իսկ այդ հիմնարկն ինքնրստինքյան կվերանա, երբ անհետանան դրա գոյությունը պայմանավորող պատճառները, երբ երկրամասում շատանան հաղորդակցության հարմար ճանապարհները, երբ զարդանան արդյունաբերությունն ու առևտուրը, առաջանա արտադրողների և առևտրականների ավելի կրթված ու իրարեխիղճ դասակարդը և երբ, վերջապես, մեր ոստիկանական վարչությունների մեջ կսկսի իշխել արդարամտությունն ու անշահամոլությունը»[49]։

Բարյատինսկու այս տողերը կարող են առիթ տալ կարծելու, թե Ախվերդյանը հասել էր իր նպատակին և Թիֆլիսի համքարությունները կարող են շարունակել իրենց գործունեությունը։ Իրեն նախորդած Վորոնցովի պես Բարյատինսկին ևս պարզապես որոշում ընդունեց համքարությունների լիկվիդացումը թողնել իրերի զարդացման բնական ընթացքին։ Հրաժարվելով համքարությունները վարչական կարդով անմիջապես վերացնելու մտքից՝ նա պետական հովանավորության տակ չէր առնում համքարությունները։ 1859 թ. սկսած կառավարական միջոցառումները եկան սահմանափակելու առևտրական համքարությունների դերը, իսկ տասը տարի անց, 1868 թ., հատուկ օրենսդրությամբ նույնիսկ լիկվիդացնելու այդ համքարությունները։ Ինչպես ճիշտ նկատում է Զուրարյանը, XIX դարի կեսերին Կովկասում կապիտալի ձևերից ամենազարդացածը առևտրական կապիտալն էր, որի արագ և ազատ զարդացմանը խանդարում էին առևտրական համքարությունները, մինչդեռ արդյունաբերական կապիտալի զարդացումը դեռ չէր հասել այն աստիճանին, որպեսզի անհրաժեշտ լիներ լուրջ կերպով դնել արհեստավորական համքարությունների լիկվիդացման հարցը[50]։

Թեև 1869 թ. Կովկասի դերագույն վարչությունը բավականացավ միայն համքարությունների գործունեության որոշ սահմանափակումներով՝ երկրամասի կապիտալիստական զարդացումը դալու էր շուտով վերջնական քայքայման դատապարտելու միջին դարերից ժառանգություն մնացած այդ ինստիտուտը։ Դրան նպաստում էր Անդրկովկաս ներմուծվող ռուսական և եվրոպական արտադրանքների բուռն աճը։ Եթե 1873—1881 թթ. Եվրոպայից Անդրկովկաս էր ներմուծվում տարեկան 7—8 միլիոն ռուբլու ապրանք, նույն տարեթվերին Ռուսաստանից ԱԿ։ ծովի վրայով ներմուծվող ապրանքների արժեքը 5 միլիոն ռուբլուց 16 միլիոնի հասավ։ Ընդսմին Անդրկովկասի այդ ապրանքների վաճառքը կենտրոնանում էր հայերի ձեռքում[51]։ Կապվելով Ռուսաստանի կենտրոնների հետ, հայ բուրժուազիան դառնում էր համքարությունների մեջ միա-

47 Նույն տեղում, էջ 22։

48 Նույն տեղում, էջ 22 և հտ.։

49 Նույն տեղում, ծան.։

50 Ս. Շ. Զ ո ւ ր ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 282։

51 Л. М а к а р о в, Закавказье в торговом отношении, М., 1884, էջ 5 և 33—34։

ցած տեղական մանր արտադրողների դերեզմանափորը։ Զուր չէ, որ Ախվերդյանի դրքույկի առաջաբանի անհայտ հեղինակը արդեն իսկ 1883 թ. դրում էր, թե այդ կազմակերպություններից մնացել են աննշան հետքեր։

Անձնապես Ախվերդյանը չէր պատկանում այն միամիտների թվին, որոնք Բարյատինսկու մակադրությունից թե առած կարող էին պայծառ ներկերով պատկերացնել համքարներին սպասող հեռանկարները։ Նա գիտեր, որ ցարական սատրապները միշտ զուսպ վերապահությամբ են մերձենում տեղական ժողովուրդների կարիքներին արձագանքող մարդկանց կարծիքներին, սանգամ երբ դրականորեն են գնահատում նրանց ծառայություններն ու դիտելիքները։ Տակավին երիտասարդ էր Ախվերդյանը, երբ Մ. Էմինին հասցեագրված իր մի նամակում, խոսելով հայազգի Մովսես Արղությանի՝ Դաղստանում ունեցած ռազմական հաջողությունների մասին, գրում էր. «...Գոնե նրա (Մ. Արղությանի) բարեխիղճ գործողություններից կառավարությունը կհամոզվի, որ մենք, մեղավորներս, կարող ենք պետք դալ պետական ծառայության համար՝ առանց կասկածամտության ու անվստահության, որոնցով խարազանում են մեզ՝ թշվառներիս։ Ահա մի քանի հարյուրամյակ է, ինչ մենք, դիպվածով թե ճակատագրի բերումով, երկրի երեսով մեկ ցրված թափառում ենք, չփայփայված հյուրասիրությամբ սպասելով անարդանքի ու խայտառակության։ Իմ կարծիքով, աննախանձելի է աստծո սիրած ժողովրդի վիճակը, որը համենայն դեպս ապրում է մեսիայի գալստյան հուսով»[52]։ Նկատենք նաև, որ կովկասյան վարչության մասին Ախվերդյանի մշակած բնական հայացքներն են հենց, որ դաղափարական գժտություն առաջացրին նրա և երբեմնի նրա ռուս բարեկամների՝ Չերնիշևի և Բուտկովի միջև։ «Ոչ թե իմ ունձնական շահախնդրությունները (որոնցով ես երբեք չեմ տարվել), այլ պատվասիրության մասին ունեցածս հասկացողությունները ինձ հարկադրեցին մի վարքագիծ, որը նրանց կարող էր վատ կարծիք ներշնչել իմ մասին, հետևապես և առաջ բերել նրանց սառնություն իմ նկատմամբ»—պարզաբանում էր Ախվերդյանը Էմինին հետագայում[53]։

XIX դարի առաջին կեսում կովկասյան սահմանագլխի վրա Պարսկաստանի ու Տաճկաստանի և Կովկասի լեռնականների դեմ ցարիզմի մղած պատերազմները զգալապես զարկ տվին Կովկասի տնտեսական զարդացմանը։ Զորքերի պարենավորման, զորանոցների և պետական շենքերի կառուցման, ճանապարհների շինարարության ու ապրանքների փոխադրման, հանքային հարստությունների շահագործման և պետական դանձումների կապալային սիստեմը մեծապես նպաստում էր Կովկասի առևտրական կապիտալի զարդացմանը, այն մեծ մասամբ կենտրոնացնելով հայ առևտրական բուրժուազիայի ձեռքերում։ Զարդացման նպաստավոր պայմաններում էր զրվում նաև տեղական մանր արտադրությունն ու դրա հետ կապված համքարությունների մեջ մտնող արհեստավորների ու մանր առևտրականների գործունեությունը։

Դրությունը փոխվում է դարի երկրորդ կեսում։ Կովկասը դառնում է Ռուսաստանից և արտասահմանից Կովկաս մուծվող ֆաբրիկատների վաճառատեղի՝ հարվածի տակ դնելով համքարությունների մեջ մտնող տեղական արհեստավորների ու մանր առևտրականների գոյությունը։ Երկաթուղիների կառուցումը միայն է դնում երկրամասի արդյունաբերական կապիտալի զարդացմանը։ Միաժամանակ վերանում է հանքային հարստությունների շահագործման ու պետական դանձումների կապալատվության գիշատիչ սիստեմը։ Տեղական առևտրական կապիտալը լուրջ քայլեր է անում մտնելու զարդացման արդյունաբերական ոլորտի մեջ, մի պահ մրցության մեջ մտնելով, բայց ի վերջո տնտեսական ընդհանուր ճակատ կազմելով և միաձուլվելով Կովկասում գործող ռուսական և արտասահմանյան կապիտալիստական ձեռնարկությունների հետ։

Հրատարակվող նյութերը օգնում են լուսաբանելու Անդրկովկասի տնտեսական զարդացման գծերից մեկի՝ համքարությունների մեջ կազմակերպված արհեստավորների և առևտրականների XIX դարի կեսերին վերապրած ճգնաժամի որոշ էջերը։

Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

---

52 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Ախվերդյանի ֆոնդ, 1843 թ. օգոստոսի 30-ին Մ. Էմինին գրած նամակը։

53 Նույն տեղում, 1852 թ. սեպտեմբերի 24-ին Ախվերդյանի գրած նամակը Մ. Էմինին։

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՎԱՎԵՐԱԳԻՐ № 1

Душевно уважаемый **Юрий Феодорович!**

Препровождаю Вам при сем положение Совета Главного Управления с приложением мнений некоторых членов Совета об амкарствах. Князь Александр Иванович* познакомился с этими мнениями, и я доложил Его Сиятельству, что я их передаю Вам для соображения при составлении записки о пользе приносимой обществу амкарствами. Я полагал, что в мнениях этих будет заключаться достаточно данных для составления записки о вреде, приносимом амкарствами, но в этом я ошибся. Итак, я еще не знаю, кому поручить составление враждебной записки против сих учреждений, но полагал, что записка в пользу их, защищая амкарство, тем самым укажет на все упреки, которым они подвергаются.

Желаю Вам доброго здоровья и с искренним уважением и совершенною преданностью имею честь быть

Вашим покорнейшим слугою
Алексей Крузенштерн

17 января 1857 г.

(Հայկ. ՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Գեորգ Ռիվերդյանի ֆոնդ, բաժին 2-րդ, № 148)։

ՎԱՎԵՐԱԳԻՐ № 2

Պատվելի բարեկամ իմ աղա Գալուստ

Էս օրերս Ձեր եղբայր Գեորգեն իմացա ձեզ թաջիր-բաշի նշանակելու։ Շատ ուրախացա առաջ ձեզ համար, հետո ինձ համար՝ հիմիկ ավելի կարողություն կունենաք իմ խնդիրքն կատարելու։ Խնդիրքս մե քիչ կը նեղացնե ձեզ ու շատ էլ հետ կու դցե Ձեր սեպհական գործքեն, բայց էնքան վստահ եմ ձեզանից, որ հուսարձակ դրում եմ, ու անհամբեր էլ կու մնամ Ձեր պատասխանին։

Մեկ աշխատանք եմ սկսել Թիֆլիզու համբարի կարգադրության վրա, որն էր, ինչպես բանիցն երևում է շատ հին պիտի ըլի, և իր սկիզբն պիտի ունենա կամ պարսից ժողովուրդեն կամ (պարսից) տիրապետողներից։ Իմ առաջ բերած խնդիրն պարզելու ինձ համար հարկավոր են մի քանի տեղեկություններ, որն որ խնդրում եմ հատուկ ինձ պարտավորելու, հաղորդեք ստուգապես և շտապով։ Ամեն իմ մեկ հարցմունքին մեկ հաստատ պատասխան եմ խնդրում։

* *Խոսքը փոխարքա Բարյատինսկու մասին է։*

1. Մեկ արվեստի կամ միատեսակ առարկայով առևտուր անող մարդիկ միավորյալ կոչում են էստեղ (իմա՝ Թիֆլիզում—Ա. Հ.) իրանց համար: Ամեն համքարն ջոգում է իր համար գլուխ կամ կառավարիչ— ուստարաշի: Սրան օգնակից կամ խորհրդակից—աղսակկալ. էրկու, էրեք կամ չորս: Ուստաբաշու հրամանքը համքարի անդամներուն հաղորդող—իգիդրաշի: Եվ մեկ գանձապետ—խազնադար: Էսպես համար ասվիլը և կարգավորիլը և սրանց գործակալներու ջոգվիլը և անվանակոչությունները կա՞ն ես պարսից քաղաքներումն՝ Թավրիզ, Թեհրան, Իսպահան, թե չէ: Կարելի է, կարքն ըլի էդտեղ էլ, բայց անունները ուրիշ են: Իմաց արեք դրանց անունները ու կարքադրությունն:

Ծանոթություն. ի՞նչ է նշանակում համքար, ասնաֆ, իգիդրաշի:

2. Ինչպե՞ս են ընտրում իրանց համար ուստարաշի, քանի՞ ժամանակով, նրանց հաստատելու կամ ընդունելու համար առաջարկո՞ւմ են կամ հայտնո՞ւմ են քաղաքի կառավարչին կամ շահին, թե չէ:

3. Ի՞նչ կապակցություն ունի ուստարաշին քաղաքի կառավարչի հետ, և պատասխանատո՞ւ է տերության առջևն, թե ոչ: Կառավարությունն իր հրամանքն ժողովուրդին հայտնելու համար, գո՞րծ է դնում ուստաբաշիներուն, թե չէ: Եվ թե կառավարությունն չէ հավան ուստարաշուն կամ անբավական է նրանից, ունի՞ իրավունք նրան փոխելու իր կամքով՝ թե չէ:

4. Ամեն համքարն ունի՞ արդյոք ուստարաշի. և համքար ասվիլն ունի՞ սովորություն մենակ արվեստավորներն, թե ուրիշներն էլ՝ ինչպես՝ բաղկալներն (մրգավաճառք), ալափներն (ալյուրավաճառ), դասաբներն (մսավաճառք), թյություն վաճառողներն, բազազներն, գարաֆներն (մանդրում (SIC) ծախողները), թե չէ: Եվ սրանք էլ ունի՞ն իրանց համար ընդրած ուստաբաշի. թե չէ: Ու արվեստավորներու և վաճառողներու համքարն միևնույն կարքադրություն ունի՞ն, թե ուրիշ ուրիշ է:

5. Ի՞նչ իրավունք ունի ուստաբաշին իր համքարի անդամներու վրա: Նրա հրամանքին հանդիմանողն (SIC) ինչպե՞ս է պատժվում, և պատժածի ներելն ինչպե՞ս է ըլում:

Ծանոթություն. Թիֆլիզու համքարներու մեջ էս կարքադրությունն կա՝ թե որ համքարի մեկ անդամն մեղավոր է ըլում. այսինքն ուշունց է տալիս իր ընկերին կամ իր գերդաստանում անկարք է ժաժ գալի. իր համար թաքուն ապրանք է առնում ու իր ընկերին ապրանքից փայ չէ տալի. մեռնելու վրա՝ թե թաղման օրը, թե այգի վրա չէ գնում. մատնվում է հարբեցողության համար և այլն.—էն ժամանակ ուստաբաշին դնում է նրա վրա յոլ (շտրաֆ) մեմանեթից ինչրու հինգ մանեթ՝ հանցանքին հարմար:—Թե որ մեղավորն էս յոլն չէ հատուցանում՝ հայնժամ նա անիծվում է. նրան կողպում են, այսինքն նրա հետ էլ չեն խոսում, նրա հետ կապակցություն չեն ունենում, ապրանքից փայ չեն տալի, մեկ խոսքով՝ էլ ընկեր չեն ճանաչում. թե որ սրանից հետո ես չէ հնազանդվում այսինքն յոլը չէ տալի,—ուստարաշին իր իգիդրաշու բերնով ապսպրում է, ուրիշ ուստարաշիներուն՝ որ նույնպես նրան կողպեն, այսինքն նրա հետ չը խոսեն և նրա վրա բան չը ծախեն, ու էս առաջարկությունն կատարվում է միշտ: Հին ժամանակներում էստեղ արվեստավորներու մեջ սովորություն է եղել, որ ուստաբաշին չը հնազանդվողի դուքանն իստակ կողպեքով կողպրում է եղել, կամ արվեստը կատարելու գործիքներն խլում են եղել մինչև մեղավորի հնազանդվիլն—էս սովորություն էլ կա՞ էդտեղ, թե չէ:

6. Թե որ համքարի անդամն անբավական է իր ուստաբաշու դաղաստանից ու վճռից կարո՞ղ է որ նրա վրա գնա գանգատ ուրիշ համքարի ուստաբաշիներու մոտ, և ըլո՞ւմ արդյոք, որ էս վերջիններն քննեն գանգատվողի խնդիրքն, ու նրա ուստաբաշու վճիռն սուտ հանեն։

7. Էստեղ համքարն ունի սովորություն, որ նոր տարին իր ուստաբաշուն կը տան ընծա խնձոր մեջը ցրցած մե աբասի, երկու աբասանոց կամ ավել, և ուստաբաշին էն օրն համքրին տալիս է ճաշ։ Նույնպես, երբ որ ուստաբաշին իր համքարի համար առնում է վաճառողից ապրանք բարխանայով, հայնժամ ապրանքի տերն պարտավոր է տալ ուստաբաշուն ամեն բեռին համար նշանակած փող։ Նույնպես, երբ ուստաբաշին իր համքարի և անդամներու մեջ ընկերություն է հաստատում կամ ընկերներու բաժան բաժանությունն է վերջացնում, հայնժամ էն անդամներն տալիս են նրան մե մե աբասի,—սրան ասում մաղարիչ։ Էս սովորություններն կա՞ն էդտեղ, թե չէ, կամ պարսից սովորությենով ի՞նչ է ուստաբաշու արդյունքն. և ի՞նչ է նշանակում մաղարիչ։

8. Թիֆլիզու համքարն ունի սովորություն.

ա) Փոքր աշակերտին՝ թե որ երեխայն որը է կամ պակասավոր, ուստեն ուտեցնում է ճաշ, և շաբաթ օրն նրան տալիս իբր վարձատրություն՝ մեկ շահիից ինչրու վեց շահի փող,—և էս փողին ասում են չագիրդաւա (ի՞նչ է նշանակում)։

բ) Երբ որ աշակերտն հասակը մտած վարժվում է՝ նրան ասում են քարզար (ի՞նչ է նշանակում) նրա վարձն էլ ավելնում է. շաբաթն տալիս են նրան մեկ մանեթից մինչև յոթն աբասի. միայն քարզար անվանվելու համար աշակերտն պիտի տուն տանե համքարի դանձումն մեկ կամ երկու մանեթ, ավել պակաս—սրան ասում են դաստուրահաց։

գ) Քարզարն, երբ որ ուզում է դառնա ուստա—հայնժամ նա պիտի օրհնվի. օրհնանքն ըլում քահանայի, ուստաբաշու և իր համքարի անդամներու ներկա ըլելով. առ հասարակ օրհնվում են ութը, տասն ու տասն ու հիսգ ուստա մեկ օր,—և օրհնանքի համար տալիս են նշանակած փող, որից մեկ մասն մրդսվում ճաշի համար, և մնացածն մտնում է համքարի գանձն, և նորընծայն իր ուստին տալիս է խալաթ.

դ) Երբ որ օրհնած վարպետն ուզում է դուքան նստիլ. հայնժամ նա պիտի տուն տանե համքարի գանձն նշանակած փող—սրան ասում են դուքնարաց կամ նհազ (ի՞նչ է նշանակում)։

ե) Ամեն համքարն սովորաբար զատկից հետու մատուցանում է մատաղ, և սրա համար ամեն անդամից՝ կարողության համեմատ՝ ուստաբաշիքն առնում են ոչխար ու բրինձ առնելու համար փող,—սրան ասում են մատաղի փող։ Էս փողովն եփում են շիլափլավ և բաժնում աղքատներուն։

զ) Թիֆլիզու համքարն հնուց դրել է իր վրա պարտք իր քաղաքի մեռելներու թաղելն, ևս ժանտախտի և ուրիշ դիպչող ցավերու ժամանակն։ Երբ մեռնում է իր համքարի մեկ անդամ՝ գնում են դուս սրան թաղելու, պատիվ տալու համար գնում են ուրիշ համքարի մեռելու վրա. և սովորությենին համեմատ, երբ որ հրավիրած են ըլում թե քաղաքացու, թե ազնվական մեռելու վրա, պարտք են համարում գնալ, և հայնժամ փարթամներն տալիս (են) ամեն պատահած համքարին մեկ թումանից մինչև երեք թուման, ու էս փողն նույնպես մտնում է համքարի գանձն։

14. Էսպես համքար գտնվո՞ւմ (է) ևս Նոր Ջուղա քաղաքում, թե չէ։

15. Պատահե՞լ է իսկի պարսից տերության մեջ, որ մեկ համքարն՝ առանց իրանց կարգացողներու քրսքրսելով կապվին միատեղ և անհնազանդություն ցույց տան տերության առջև կամ ապստամբին։

16. Մեկ համքարի ուստեն կարո՞ղ է որ կատարե ուրիշ համքարի գործն, թե չէ օրհնած նրանց համքարում նույնպես ուստա։

17. Համքարն տալի՞ս է արդյոք իրան կամք էնպես ինքնակամ բաներ բռնելու, որ քաղաքի բոլոր ժողովուրդն կամ մուլքադարներն անրավական ըլին նրանցից և գնան նրա վրա զանգատավոր տերության մոտ։

18. Թե որ կարելի է, խնդրում եմ, իմանաք էտ երկրի գիտնականներուց՝ գիտե՞ն որ ժամանակից է սկսվում Պարսկաստանում համքարի կարգադրությունն ու էտ կարգադրությունն է բուն ժողովրդից հնարած և սարքած բան, կամ թե է կարգած և հաստատած տերությենից, կամ մեկ նշանավոր թագավորից։

19. Ինչ զորություն ունին պարսից քաղաքներում՝ դարոգան, մոհթեսիբն ու քալանթարն ու քեթխուդաներն։ Ո՞վ է սրանց ընտրում և հաստատում և ունի՞ն ինչ ազդեցություն համքարի վրա կամ ուստաբաշերու վրա։

20. Ինչպես Թիֆլիզում մեկ ժամանակ ըլել է մելիք, էսպեսի աստիճանավոր ընտրվո՞ւմ է և Պարսից քաղաքներում, և մելիքն մի և նույն զորությո՞ւն ունի ինչպես քալանթարն, թե ունի ուրիշ զորություն և իրավասություն։

21. Թե որ կարելի՝ իմանաք էտտեղ Հուսեին սարդարի ժամանակն Երիվանու մելիքն (Մելիք Սահակն) ի՞նչ պարտավորություն ուներ. ունե՞ր նա իրավասություն մենակ հայ քրիստոնյա ժողովրդի վրա, թե բոլոր Երևանու բնակիչներու վրա։

22. Պարսից քաղաքներում նշանակո՞ւմ են ուտելյաց առարկաներու վրա, ինչպես՝ միս, եղ, բրինձ, թխած հաց և այլն նիխար (տաքսա), թե չէ։

ա) Ո՞վ է նշանակում, ինչպես և ի՞նչպես են հայտնում ժողովուրդին։

բ) Ի՞նչ առարկաներու վրա։

գ) Նիխրը նշանակվում են մենակ դուքանում վաճառած առարկաներու վրա, թե ևս գավառներից բերած մեյդանում վաճառելու համար առարկաներու վրա։

դ) Ի՞նչքան ժամանակի միջոցում փոփոխվում է նիխրն։

ե) Դուքանում ու մեյդանում վաճառած առարկաներու նիխրն մե՞կ է, թե ունի զանազանություն, և ինչքա՞ն։

զ) Բաղկալներն և ալափներն կարող են որ առնեն մեյդանում բերած ալյուրն, բրինձն, եղն և այլն մեկ ժամանակ ժողովրդի հետ, թե նշանակած է նրանց համար ժամանակ (ինչպես Թիֆլիզում կեսօրից հետո) էն առարկաներն առնելու։

է) Բաղկալն, ալափն և այլն կարո՞ղ են գնան գավառներն, ու էնտեղ առնեն ալյուր, եղ, բրինձ և այլն ու բերեն քաղաք ծախելու, թե պարտական են, որ առնեն քաղաքում գյուղականներուցն։

23. Թե ուտելյաց վաճառողն ծախեց, իր ապրանք նիխրից ավելի գնով, հայնժամ նա պատժվո՞ւմ է, ումմե՞ն է պատժվում և ինչպե՞ս։

24. Ալյուր, եղ, բրինձ ծախողն կարո՞ղ է ապրանքն քաղաք բերած, իսկույն չծախե, բայց պահե, մնալով՝ որ նրանց գինը բարձրանա ու թանգ ծախե, թե տերությունն արգելում է էսպես վաճառողի գործողությունն։ Եվ տերությունն էտուր համար ինչպե՞ս է պատժում։

Խնդրում (եմ), սիրելի Գալուստ, չը նեղանաք ինձ վրա՝ էսպես մանրամասն բաներ հարցնելու համար։ Դուք լավ գիտեք, որ շատ հարկավոր չըլի ինձ համար, ձեզ էլ չէի նեղացնիլ։ Արա տեսա խընդրում եմ, որ քանի շուտ ուղարկեք ինձ էս հարցմունքներու պատասխանն, էնքան ավելի կը պարտավորվիր։

Ձեր մտերիմ բարեկամին և խոնարհ ծառայեն՝

Գ. Ախվերդյանց

Թիֆլիզ 1857 ամին հունվարի 18-ին

Կրկնում եմ խնդիրքս՝ քանի շուտ կը ստանամ Ձեր պատասխանն՝ էնքան ավելի կը պարտավորվիմ Ձեզանից։

(ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Գ. Ախվերդյանի ֆոնդ, 1 բաժին, № 61)։

ՎԱՎԵՐԱԳԻՐ № 3

Ողորմած Տեր Յուրի Թեոդորովիչ

Հառաջ քան զամեն հարցրեք, էս ինչ բարակ թուղթ և էդ էլ փոքրիկ։ Պատասխանում, էստեղ լոտն փոշտումն արժե մին մանեթ արծաթ. ասացի լոտն, այսինքն 2½ մսխալն և ոչ թե 3, որպես ընդ բոլոր Ռուսաստուն։ Ուրեմն առանց երկարաբանության, կարծեմ որպես վաճառական իրավունք ունիմ ոչ թե բարակ թղթի վրա գրել, այլև մանրացնեմ գրչին տառերն։

Ամենայն ուրախությամբ ստացա Ձեր գրությունն, հունվարի 24ենն գրածն. որում հառաջ քան գայս մին ամիս պարտավոր էի պատասխանել. բայց առաջարկություններն և հարցմունքներն, որ արած էիք, Ձեզ ես հավաստի պետք է լինի, ստիպեցին ինձ ուշացնել, և այսօր այսքան միայն կարող եմ ասել, թե հետամուտ եմ ժողովել և շուտով որքան կարելի է ուղարկել։

Ըստ որում ուզած եք այլևայլ քաղաքաց սովորություններն ես գրել Ձեզ, վասն որո և ես մինչև ստացա ձեր գիրն, 7.10.15 օր հետո եմ գրած Ասպահան, Համատան և Խոյ քաղաքներն ինձ հաղորդեն, և սոքա են հին առևտրական քաղաքներ, ուր թե կան մնացյալ հին սովորություններն. պետք է ասած թե ի հնուց անտի եղած են, թե ոչ որպես Թարվեզ են, ուր նշխարքն ես չեն երևում այնոքիկ, զորս հարցանել բարեհաճած էիք։ Պետք է կարծած թե միմիայն ի Թիֆլիզ կարող եք Ձեր բավականություն ստանալ։

Վերն ասացի թե 7.10.15 օր հետո եմ գրյալ, չկարծեք թե մոռացած կամ ուշադրություն չեմ դարձրած Ձեր գրության. քավ լիցի, այլ որովհետև ի Պարսկաստան կանոնավոր սուրհանդակ չկա, այլ պետք է սպասել կարավանի ու ճանապարհորդաց, վասն որո և այնքան ուշացրել եմ։ Նույնպես արժանի է աստ քանի մի բառ ասել, զի Ձեր գրերն ես էստեղաց պարտավոր եմ ճանապարհորդաց հետ ուղարկել Նախիջևան, ուստի փոշտով ձեզ կը հասցնեն։

Ձեր գրություն մինչ ստացա, կնյազ Մելիքովի մոտ էի. հարցրավ, ինչ նոր համբավ են գրում Թիֆլիզու. պատասխանեցի ոչինչ։ Վեր առավ, ապա ինչ է այդքան երկար գրությունն։ Ասացի դոկտոր Ախվերդովն է գրում։ Զարմացյալ կրկնվեց. մի՞թե կճանաչեք. իհարկե, ասի։ Խնդրեց ի պատասխանելն գրել Ձեզ յուր սիրո ողջույնն, զոր և մատուցանեմ այժմ։

Զգիտեմ կարդացի՞ք կամ կարդացե՞լ եք Մասյաց Ադամի օրագիրներն՝ Հ. Գաբրիել Այվազովսկվո, ուր Ձեզ համար քանի մի նոմերումն երկարորեն

դրվել է քաղաքական նոր հարցերի լուծման ոգով։ Դա պետք էր գոյություն ունեցող հարցերը տալիս նոր լուծումներ։ սա նոր կոչում։ Հասկանալի բնորոշում, Լենինն՝ Ի. Պետրոսը տալիս էր նրան ֆանատիկոսաբար Ինքնիշխանությունը տալիս գաղափարական ֆասեն ընտանեկան բնությունը։ և ինքնակալ գաղափարների հիման էջերին և ֆասեն Հայրենական ֆաղաքացիներ։ Դա հասկանալի եմ ձեզ որոշակի հարցերը նաև ազգերին սա նոր Հայ Հայրական Արքայությունն է պրոլետարիատ սա նոր Հայ, ինչ ձեր կարգացել, կարդաք։

Ինչպես գրել բարձրագույն Ինքնիշխանը և Դրանում ինչ գաղափարներն ավելի գաղափարներն են կարդացվում նոր բերել... դրանց այն ուզարկվում հայտ, կարդալ ինչ ինչ նոր են։ ոչ, տալ հա մինչև բերել եմ տալիս և ուզարկում պետական Արքայությունը։ Գնում եմ ինքնիշխան, ասեմ հարց, դուք նոր նոր ձեր ինչ ասելիք, բան ինչ խնդրել, ասում պետք եմ և էլ կարող եմ այդ ուզարկել կարգալ և վերադարձնեմ։

Հետևում Ինձ։ Ամբողջությունը հանում՝ ասելիք մեջբերումներ Ռանկան Գաղափարներ և Ինքնիշխանների։

Գնացեք Ինք պիտի խնդրում ասեմ, դրանք մնում մեջ

Գաղտնիությունն Ինքնակալ
Խնդրում Ռուս
Պարոնաց Վերակացուներ

1837, XII, 18.

(ՀՍՍՀ ՊԱ գրադարանում և ուրիշներ խնդրանքներ։ Դրանց հիմնադրվել էին, բաժ. II, № [illegible]).

ՎԵՐԱԿԱՑՈՒՆ № 4

Գաղտնի Ինք,

Ձեր խնդրանքներ ասեմ ասելիք գաղտնիությունը վերակացությունը և Հանդարտ Գաղտնիությունն, դրա կարգում մեջ Գաղտնի Ամբողջությունն Ինքնակալ.

Թե մեկնաբանք եմ է խնդրեն և գրվում բերվեցին, կարդում լսում եմ։ Ինչ ասում եմ, կարդաց է եմ դրանց։ Ինչ է եմ դրանց Ինքնիշխանը։ Գնում եմ ինքնիշխան, ասեմ հարց, դուք նոր նոր ձեր ինչ ասելիք։ Ինչպես գրվում Ինք. ուրախությունը հրամայվեն գրեցեք։ Ձեր դրում խնդրում ինչ վատագն, ասում և էլ ուրիշներն և եմ կարդացա մեջբերեցա մեջբերեցի։

Խնդրում գնում խնդրում ուզում մեջբերեցի Ռանկան Գաղտնիությունն՝ և Բերում Ինքնիշխանները՝։

Գնացեք Ինք գնում խնդրում ասեմ, դրանք մնում մեջ

Գաղտնիությունն Ինքնակալ
Խնդրում Ռուս
Պարոնաց Վերակացուներ

17 մայիս 1837
Բարեկամ

---

[1] Ի. Պ. Գաղտնիություն։
[2] Ի. Ն. Գաղտնիություն։

Համբյար. Պարսկերեն, նշանակ գործակից, համագործ։ Որպես հայոց նույնպես և պարսից լեզվումն բառս, համ, միևնույն նշանակությունն ունի, զորօրինակ, համարարբառ, համաձայն և այլն։ Թիֆլիզ համբյար, համբարասելով իմանում են մին տեսակ արհեստավորներն, որպես և Պարսկաստանումն ասնաֆ։ Եթե էստեղ ասեն ատթարի համբյարն, ալլաթի համբյարն կը ծիծաղեն, այլ պետք է ասած ատթարի ասնաֆն, ալլաթի ասնաֆն և այլն։

Ուստարաշի. այսինքն վարպետ։ Բառս ուստար պարսկերեն է, և աղավաղյալ թուրքերենումն եղած է ուստա. իսկ բաշն է թուրքերեն, նշանակե գլուխ. պետ, մեծ և այլն։

Աղսաղկալ. թուրքերեն, ալեվարդ. սպիտակամորուս. բայց խոսակցության մեջն երբ հասարակության վրա է, նշանակե բանիմաց, փորձված մարդն։

Իգիտբաշի. թուրքերեն, իգիտ այն մարդո ասեն որ է ուժեղ, բարձրահասակ, լավ կերպարանքով, լավ կովարար երիտասարդ։ Իգիտբաշին էստեղ շատ քիչ գործածական բառ է։

Խաճառար. այսինքն՝ գանձապետ. և է պարսկերեն բառ։

Յոլ. թուրքերեն նշանակե բառ առ բառ նանապարհ, ուղի. բայց խոսակցության մեջն գործ են ածում օրենք, կանոն և երբեմն խղճմտանք և իրավունք բառերի տեղ։

Մաղարիչ ո՛չ պարսկերեն է և ո՛չ թուրքերեն։ Գիտեմ այսքան, որ Արցախու նահանգումն մաղարներ. նորափեսի հասակակիցներին ասեն։ Սոքա նորափեսին տանում են բաղնիս, գլուխն երեսն վեր անելիս, և շոր հագնելիս ներկա կը լինին։ Կարող եք էտեղ շուշեցի գտնել և հարցանել։

Շագիրդանա. պարսկերեն։ Վաճառականաց և արհեստավորաց մեջն գործածական բառ և է այն գումարն, որ բան գնողն տալիս է վաճառողի աշակերտացն։ Վաճառականաց մեջն շատ ապրանաց շագիրդանեն հայտնի է թե ինչ ապրանքիցն ինչ պետք է տա. և այս 100 թումանին մին ու կեսն ցերկունն կա իսկ մետաքսի, լեղակի, հիլի և մեխակի համար հական վրա է նշանակված։ Քոշ կարողի, դերձիկի, կտակ կարողի և այլ արհեստավորների աշակերտաց շագիրդանեն առնողի կամայ վրա է, տվավ տվավ, թե ո՛չ, ո՛չ։ Զանազանություն բառիս էս է, որ էտեղ վարպետն կամ խանութպանն յուր աշակերտին տված վարձին էլ շագիրդանա կասեն, բայց էստեղ ո՛չ։

Քարգյար. պարսկերեն. Նշանակ գործի եկող, բանի եկող կամ լավ ևս գործն կամ բանն իմացող, կառավարող։ Ուստեն երբ ձևում է կամ ցույց է տալիս այսպես շինե ու տալիս է քարգյարին. ա՛ռ կարե կամ շինե. նա գիտե ինչպես պետք է կարած կամ շինած, վերջացրած, մի անգամ էլ վարպետիս չի հարցանիլ, վասն որո և ոռճիկն քարգյարի աշակերտներեն ավելի կը լինի, այսինքն օրն տեղվո 10 շահեն ցմին դոռանն (դոռանն է 30 կոպեկ արծաթ)։ Քարգյարն ևս նա է, որ եթե վարպետն կամ հիվանդ է կամ խանութեն հեռացած, ինքն ունի իրավունք վարպետի տեղն նստել, չափն վերառնել, գին վերջացնել և փող ստանալ։

Նիլագ. արարերեն. նշանակ նվեր, բնծա և ուխտյալ իր ինչ։ Նշանակ ևս այն նվերն, որն որ մին խնձորի միջի փող են կոխում տանում գնում մին սրբո մատրան (իմամզատեի) մեջն, և կամ թե մինն ուխտ է արել այս ինչ խորհուրդն կատարվի այս ինչ իմամ զատեի կամ սեիտի մին գորգ, կարպետ տամ և կամ նրա սեղանն, զմբեթն շինեմ, նորոգեմ։ Խոսակցության մեջն կա-

բելի է ասել հոգիս (ջանս), մեզ նիազ եմ արած, այսինքն՝ ուխտյալ եմ, ընծայալ եմ։

Քիսալ. արմատական բառն Ֆյասալ, արաբերեն, նշանակե (հալալ) առևտուրն, փոփոխյալ պարսկերենումն եղած է Ֆիսալ և Ֆիսիպ։ Քիսիպ նշանակե պատերազմի ժամանակն գողացյալ և կամ կողոպտյալ իրն (թալան, դավլա)։ Իսկ Ֆիսալ, որ միայն վաճառականաց մանավանդ արհեստավորաց մեջն գործ կածվի, նշանակե այն գումարն, որ երկու երեք կամ ավելի մարդիկ ապրանք են առնում, հետո բաժանելիս տեսնում են կամ բիչ է, կամ լավ ու վատն չեն կարում բաժին բաժին անելիս հավասար լինի, յուրյանց մեջն քիսալ են գնում (գնալ բայն է և ոչ գնել. նույնպես չեն ասիլ քիսալ են անում, որպես գրեք) այսինքն առած ապրանաց բոլոր գումարի վրա մին գումար ավելցնում են, ով շատ է ավելացնում, նա է տանում։ Այն գումարին կասեն Ֆիսալ։ Սա չէ նշանակում аукцион, որպես գրեք, սրան ասեն աստ հառաջ*։

Սարուպուի է աղավաղություն պարսկերեն սարոֆրլ բառին, այսինքն գլուխ կողպեքի։ Էստեղ սարդֆլն քարվանսարեքի միջի խանութների վրա կը լինի և ոչ թե փողոցի որպես Թիֆլիզ։ Բազարումն այսինքն փողոցումն ոչ ասնաֆն և ոչ այլ ոք, չեն կարող միմյանց մեջն ում և իցե խանութի վրա առևտուր անել միմյանցից սարդրֆրլ առնել, որովհետև ընդդեմ է շարիաթի։ Երբ մին արհեստավոր յուր արհեստակցի խանութի վարձն ավելացնե եթե նստողն այն գնովն ուզենա, հառաջ ինքն է և ապա ավելացնողն։

Դարուղա. սորա պարտավորությունն է հսկել գիշերներն յուր ստորադրյալ մարգկանցովն (հասսաներովն) դուքան բազարի վրա, թե առաջիցն թե հետևիցն և թե կտրիցն։ Գողություն պատահի, ինքն է պատասխանատու, այսինքն 45 օրից հետն բավականություն պետք է տա խանութպանին։ Ցերեկն ևս ըստ որում տեղ ունի բազարումն նստելո (դարուղախանե) յուր մարգկանցովն, եթե կռիվ պատահի բազարումն, իսկ և իսկ պետք է, ինքն կամ յուր փոխանորդն գնան հանդարտացնեն, բռնվելո մարդույն բռնեն։ Թե գյուղացի կամ արհեստավոր է, բերե յուր բանտում բանտարկե, պատժե, տուժե։ Իսկ եթե զինվորական է, նոցա գլխավորի մոտ կը տանե քննեն և թե վաճառական լինի, բեգլարբեկու մոտ կը տանե, էնտեղ կը քննեն։ Դարուղեն բացի մին փանաբարիցն (10 շահի լայեղ) որ յուրաքանչյուր ամիսն կը ժողովե կը տանե կը տա բեգլարբեկուն (որո ոռճկումն է հաշվվում), նովրուզին քանի մի օր մնացած խոնչա կը շինե կը տա յուր մարդկանցն տանի բազարն ման ածեն. յուրաքանչյուր դուքան պետք է մի մի փանաբաթ ձգե խոնչեն, երբեմն ավելի ևս։ Այս մին պարգև է դարուղին։ Սա ոռճիկ ունի տերությունից և էն էլ շատ փոքր, թեև երբեք չի հասնիլ, ըստ որում կարավարիչն կուտե։ Նշանակած է կառավարության ձեթի փող որ գիշերներն վառեն բազարումն. այն գումարն էլ ի դաստ ոռճկի է։ Քարվանսարի միջի դուքաններեն ոչ ինչ չի ստանալ, թեև քարվանսարի տերերն տարին մին բան կը տան դարուղին և ամենն էլ մին թուման (10 դրան) դարավուլի փող։ Դարուղի ազդությունը ժողովրդյան վրա կախյալ է յուր ժրությենեն, բանիմացությենեն և լավ գող ու ավազակ ճանաչելուցն։ Եթե ձեռնուոտով ամեն գողերի հետ ծածկաբար ընկեր է. տեսնում է կառավարու-

* Ախվերդյանը շարունակեց մնալ ըստ երևույթին այլ կարծիքի. իր գրքում նա кисп-ը թարգմանում է торг բառով և ծանոթության մեջ նկատում, որ кисп պարսկերեն բառը նշանակում է «хвастание» (տե՛ս «Тифлисские амкары», էջ 23)։

թյունը ստիպմամբ է ուզում գողն, ցույց է տալիս, բռնում է, բայց հետո աշխատում է ազատել տալն։ Եղած են դարուղեք, որոց ազդությունը միևնույնն է եղած, որքան որ այժմյան բեղլարբեկքն։ Դարուղեն ոչ ինչ ազդություն չունի ասնաֆների վրա։ Գյուղերի մեջն նա որ կալերի վրա կը կանգնի չափելո, նրան ևս դարոդա կասեն։

Քյադխուդա*. Քյալանթար։ Քյալանթարն Թեհրան մեծ ձայն ունի, որովհետև բեգլարբեկի չկա և Սաֆովյանց ժամանակներն էլ Ասպահան էնպես է եղած որպես թե թագավորն յուր թագավորանիստ քաղաքումն ինքն է բեգլարբեկի։ Քյալանթարի թաղի քյադխուդայնքանցն փոքր ինչ պատվավոր է թե քյադխուդաբաշի լինի։ Քյալանթար էն քաղաքներումն ենք տեսնում հասարակորեն, ուր թագավորանիստ է եղած կամ տիրապետողաց նստելո քաղաք, զորօրինակ, Ասպահան, Ղազվին, Շիրազ, Որմի և այլն։

Քյադխուդաբաշի կամ քյադխուդա (որպես ասո ռուսո պրիստավն քաղաքի)։ Թուրքերեն Ֆյանդ, գյուղն է և խուդա՝ պարսկերեն, տեր, մեծ, աստված. բարդյալ և աղավաղյալ եղած քյադխուդա։ Յուրաքանչյուր թաղն ունի մի մի քյադխուդա, հորոց պատվավորն անվանի ի տերութենեն քյադխուդաբաշի։ Թաղի մեջն ով ոք գանգատ ունենա կը գնա քյադխուդին կը հայտնե. սա էլ թե արյունի, առևտրի բան չէ՝ ինքն կը վերահասու լինի և կը վճռե ևս, և թե վերաբերյալ է շարիադի, այսինքն հոգևորականաց, կը ղրկե նոցա մոտն. շատ անգամ էլ կը հավաքե քանի մի աղսաղկալներիցն թաղի, նոցա ներկայությամբ վճռել. եթե այս ևս չեղավ, բարձր տեղ իմացումն կը տա, այսինքն՝ նախ բեգլարբեկու դատարանին ուր ամենն քյադխուդեքն են ներկա, և ապա գլխավոր կառավարչին։ Շատ անգամ ինքն քյադխուդեն մին երևելի գործի համար, որ կը վերաբերի յուր թաղի բնակչին, առաջնորդում է նրան, տանում բեգլարբեգու մոտ կամ գլխավոր կառավարչի, վասն պահպանելո նորա իրավունքն։ Այսքաս է որ որպես քյադխուդին, այնպես այլ պաշտոնավարաց օրենք սահման չկա, թե ի՞նչ բանի մեջ պետք է ներդործել, ցո՛ր աստիճան, եթե ինքն ուրզալու, որպես աշխարհորեն ասենք ղոչաղ է, կարող է խառնվիլ և հառաջ տանել։

Քյադխուդաբաշու և քյադխուդայի պաշտոնն կամ կոչումն որդվոց որդի է, ու չենք տեսած մինն հանեն, նրա տեղն ուրիշին դնեն և կամ մինն մեռնի որդի ունենա, հոր պաշտոնն ուրիշին տան. թեև երկու տարեկան երեխա է լինում, կամ նրա վրա հոգաբարձու են կարգում ցչափահաս լինելն կամ մոտիկ մին ազգականին են նշանակում։ Սոքա փոքր ի շատե տերությունիցն ոռճիկ ունին, թեև շատ չէ հասնում։ Փողոցումն ասնաֆի վրա ոչ ինչ ազդություն չունին սոքա։

Պարսկաստան էս թաղի մեծերի տիտղոսներ շատ գանազան են, զորօրինակ, վեմիլ, ամին, ամին ըլ մուլ, դալա բեկի և այլն։ Սոքա էլ լավ բարեկամներ ունենալով Թեհրան, աշխատում են մին մին պատվանուն ստանում թագավորիցն, ֆարմանն ղրկում խալաթով, այնուհետև քյադխուդա բառն փոխում են էն պատվանունով խոսում հետն, թեև յուր իշխանությանն, կոչմանն և աստիճանին ոչինչ գանազանություն չի անում։

* Քյադխուդա բառը հեղինակի ձեռագրում հաճախ հանդիպում ենք նաև ֆյանդխուդա կամ ֆեղխուդա ձևերով։ Միակերպության համար պահում ենք քյադխուդա ձևը (Ա. Հ.)։

1. Պարսկաստանում ամեն ասնաֆ ուստաբաշի չունի նախ, երկրորդ եթե նշանակած է յուրյան վրա ուստարաշի, միշտ առանց երևելի ազդուության է. ուրեմն և ոչ օդնական, ոչ էլ իգիտբաշի գիտեն։

2. Հորմե և հայտնի երևի, ընտրելո կարգ ու կանոն էլ չի պետք է ունենա։

3. Ասնաֆներն ոչ յուրյանց մեջն և ոչ կառավարության հետ կապակցություն չունին։ Սոցա ուստաբաշին համարյա թե մուրաշիրը բազար, այսինքն բազարի կառավարիչն է, որ ժողովե հարկ ու հատուցանե կառավարության, շատ անգամ այս մուրաշիրներն իջարադարք են։ Այս գումարն ժողովելո համար մուրաշիրն կանչում է յուրաքանչյուր ասնաֆեն 4, 5 կամ ևս ավելի աղասաղկալներ կամ մեծ դուքանդարներն թե գնացեք ձեր մալիաթն, այսինքն, հարկը ձեր մեջն խանութների վրա բաժին բաժին արեք, ցուցակի տակն կընքեցեք ու բերեք։ Նոքա ևս ժողովվում են մին բաղնսի կամ քարվանսարի կտրը վրա, ցուցակ են շինում կնքում, մեծ ձենուձենով աղաղակով, ու տանում տալիս փամյարին (այսինքն, ասնաֆի գզիրին, որովհետև յուրաքանչյուր ասնաֆն մին փաքյար ունի). սա ևս փոքր փոքր ժողովում է տանում տալիս մուրաշիրին։ Շատ անգամ նեղոյիմկա է մնում, զորօրինակ մինն դուքանն հավաքում է, մյուսն մեռնում է կամ դուքանն պարտքի համար կողպում են. կրկին էն ասնաֆն ժողովվում է, էն պակասորդ մնացած գումարի համար նոր կարգադրություն անում, այսինքն բաժին բաժին անում և նոր ցուցակ շինում, հանձնում փաքյարին ժողովե տանե տա մուրաշիրին։

4. Ասացի, ամեն ասնաֆ չունի ուստաբաշի և ունեցողներն են գտակ կարողներն, դերձիկներն, չուխա կարողներն և սոքա էլ որպես թե շնորհքի համար, առանց ազդուության։ Բաղկալների ուստաբաշին բոլոր տարին 1 կամ $1^1/_2$ ամիս ձայն ունի, այսինքն երբ խիարն դուրս է գալիս և հատ հատով է ծախվում. երբ քաշի մեջ մտավ այնուհետև ոչ ինչ ազդուություն չունի։ Սա այս կարճ միջոցումն պարտավոր է ամեն առավոտ գա ղափանի տակն այսինքն մեյդանն, օրիցն 2—3 ժամ անցած, էնտեղ նստե, խիարի գինն կտրե ու նշանակե այս ինչ բաղկալ այսքան հակն կամ հատ տանե կամ 4, 5 բաղկալ մին, բեռն կամ մին հակն։ Սորա խոսքովն գինն խիարի կառնվի և կը ծախվի, այլ ոչինչ։ Սորա վարձն տարին մին խալաթ է, որ գլխավոր կառավարիչն կը տա, որո գինն 2, 3 մանեթ կը լինի, և բացի սրանե այլ ոչինչ օգուտ չունի։

5. Թե ասնաֆն մինն գանգատ ունի որպես համարվեստի վրա նույնպես այլ արհեստավորի վրա. ուր կամենա կերթա, բայց ավելի ևս նախ մուրաշիրի մոտ կերթա, որ և կը ցանկա յուր օգտի համար (ըստ որում որքանի գումարի է գանգատն, դկնի վճռելո տասնին մեկ արդյունք ունի հայտնի) որպես զի մին կերպով 2, 3 կամ ևս ավելի աղսաղկալ բերել տալով յուր տունն, նոցա միջնորդությամբն վերջացնե, թե որ այսպես գլուխ չեկավ, գանգատն կերթա բեգլարբեկու մոտ. էս էն կերպն է, երբ գանգատավորն շարիաթով չէ ուզում վերջացնել. բայց թե պինդ մուսուման է, իսկույն կերթա շար, այսինքն օրենքի, որ է հոգևորականաց ձեռքին։ Ի հարկե, սոքա ևս կը ներգործեն վկայիդ հաստատությամբ, երդմամբ երկուց կողմանցն։ Ոչ ոք չի լսած էստեղ ասնաֆն անեծք, յոլ, տուժ ունեցած լինի և կամ տուժյալ լինի յուր ասնաֆեն։

6. Ոչ ինչ հարակցություն չունին կամ արհեստավորք ընդ համարհեստավորաց և կամ ընդ այլ ասնաֆից։

7. Եթե մին արհեստավոր ուզենա նովրուզին գնալ տեսնել յուր ուստեն, թե կամեցավ մին նուռն, մին խնձոր առանց գրամի, կտանե կր տա վարպետին, թե ո՛չ, ո՛չ։

Թե բարխանով ապրանք առնե մին ասնաֆ, ոչինչ գրամ չի տալ ոչ թե պատվավոր արհեստավորի կամ ծերի, այլ ուստաբաշուն ևս թե ունին։ Նույնպես երկու ընկերք բաժանվելիս կամ ընկերանալիս ումեք ոչինչ չեն տալ. բայց թե բաժանվելիս կամ թե ընկեր ժամանակն մին վեճ գուրս գա մեջերնին, կամ մուրիշի կամ բեգլարբեկու և կամ մուշթեհիդի մոտ կերթան։

8. Էստեղ արհեստավորաց սովորություն է.

ա. բ) Փոքր երեխին թե որր, թե ծնողքն կենդանի լինին, նախ հացափոր աշակերտ կր պահեն, միայն շորն կր տան վարպետն տեսնում է ձեռիցն բան է գալիս, շաբաթն մին աբասուցն (տեղվույս) ցորն մին փանաբաթ վարձ կր տա, փոքր փոքր ավելցնելով։ Երբ քարգյարության ընդունակություն ունենա օրն 10 շահիցն մինչև մին հազար դիան (այսինքն մինչևան որ է 30 կոպեկ արծաթ) վարձ կր տա։

գ) Ոչ թե քարդյարն, նաև աշակերտն էլ, երբ ուզենա առանց օրհնանքի, մոլլի, յուր վարպետին ևս ուստաբաշու, կարող է վարպետ դառնալ։ Զուզեց ծառայել այսօր, վաղն տեսար ուստի խանութի մոտն մին խանութ բացեց և սկսավ բանել, ո՛չ ոք չունի իրավունք խոսելու, բացի մուրաշիրեն, որում իմացումն կր տա փաքյարն, և մալիաթի ձեռագիրն կր գրեն, կր տանեն թե տուր տարեկան բաժինդ մալիաթի։ Բայց կան ոմանք, որ յուրյանց վարպետի հետ անբավականություն չեն ունեցել և կամ երեխայությենե անտի այն վարպետի ձեռի տակին է մեծացած ու սովորած այն արհեստն, գուրս գալու ժամանակն կր խնդրի վարպետին քան(ի) մի ծեր արհեստակիցներով գալ յուրյանց տանն ընթրել, առանց ասելու պատճառն։ Զկնի ընթրյաց կամ թե առաջ հայտնում է կամ ինքն կամ հրավիրելոց միջի բերանովն յուր նպատակն։ Ի հարկե վարպետն պարտավոր է մին քանի բառով օրհնե, որ խնդր տվա ասեն։ Եթե այն աշակերտն երախտամոռաց չէ, հացից հետո կամ հենց էն խոսքն բաց անելիս, մին խոնջի կամ սինու կամ բոխչամնջ մին կապա, որ արժենա 1, 1½ ցշ մանեթ, կր բերե կր դնե առաջեն ասելով հալալմիշ ընինք, այսինքն հացդ կերած եմ, երախտիքդ ինձ հալալ արա՛. և էստով կր վերջանա հանդեսն։

դ) Ուրեմն նոր եղած վարպետն ոչինչ տեղ ո՛չ նիազ, ո՛չ դուքանբացեք և կամ փող չունի տալու.

ե) Էս հոդվածն ամենեվին անծանոթ է էստեղ.

զ) Բոլոր Պարսկաստանումն մեռելի վրա ասնաֆ տանելու սովորություն չկա և լսած ևս չենք։

է) Ո՛չ թե մեռնելուց հետն, նաև ի կենդանության ևս կարող են դմիմյանց խանութեն հանել տալն վարձն ավելացնելով։ Երբ մին վարպետ մեռավ, իսկույն նրա կայից կամ որբերի վրա հոդարարձու կր նշանակվի ի հոդևորականաց։ Կերան, փչացրին ժամանակավ էն կայքն, ո՛չ թե տերության վերահասու լինելու իրավունք չունի, այլև նույն հոդևորականն ևս որ նշանակել է, ըստ որում այս մասին կարգ կանոն չկա. բայց երբ որբերն չափահաս եղան, էն ժամանակն դանդատում են, քաշքաշում հոդարարձուներն. ինչ գուրս եկավ եկավ, չափահասների արիության պտուղն կր լինի։

Փողոցումն, որպես ասած եմ, սարդրֆլ չկա։

ը) Պարսկաստան ուրբաթ օրերն, որ նոցա կյուրակին է, էլի բաց կը լինի դուքան բազարն. և էստեղ միայն, այսինքն Թարվիզ. 7—8 տարի կա ամառն միայն սովորություն է եղած էստեղ էնտեղ թաք-թուք կողպել, ավելի ևս յարվանսարեքանց միջին, և էս էլ հայոց վաճառականներեն սովորեցին։ Ի՞նչ էք ասում մինչև Միրզա թաղի խան առաջին վեգիրի օրն, այսինքն ցթագավորություն նասրադինշահ, յուրյանց մարգարեի՝ Մահամմիտի և Ալվո՝ ո՛չ ծնրնդյան և ո՛չ մահվան օրն անգամ ոչ մեսչիդումն աղոթել, ո՛չ ճրագալուցություն և ո՛չ կողպել դուքան բազարն և ո՛չ թնդանոթ ձգելն գիտեին. 10 տարի է ոչ սոցա հետ յուրյանց թագավորի ծնունդն ևս տոնում են, թեև շատ ընդդեմ է կրոնամոլից։

Գտակ կարողներն միայն գիտեն էստեղ, էն էլ, երբ մինն յուրյանցից մեռնի, 2—3 ժամ խանութներն կողպել։

10. ա. բ) բայրաղ (դրոշակ) չկա էստեղ և փիր ևս չունին, ամենից փիրն ասեն Ալին է (տե՛ս Հայոց արհեստավորների կարգումն)։

գ) Ասնաֆեն մինն ապրանք գնելիս, մյուսն վերա հասավ, ուզեց ընկերություն անել, պետք է նախ ընկերության սիղեն կարդան և ապա սկսեն առևտուրն անել, ապա թե ո՛չ բերանով ասին, ծածկարար խոսացին, չէ կարելի ոստ որում հարամ է, երբ վերջացրին գինն, սիղեն, էլի պետք է կարդան. այն ընկերն թե հայտնի է ընկերացած, պետք է սիղա կարդալիս ընկերանա, թե ոչ չ կարելի։ Սիղա կարդալն ամեն բանի մեջ կա, թե թուրք բարեկամ ունիք հարցնեք, կիմանաք, թե հարկավոր է, ըստ որում գրելն շատ երկար կը լինի և անհասկանալի։

Երբ մին ասնաֆ ուստաբաշուն կամ 2, 3 աղսաղկալի ղրկում է մին ապրանաց վրա, պարտավոր են ամենքն սիղա կարդալ վեքիլության նոցա, ապա թե ո՛չ առին ու չտվին, իրավունք ունին։ Շատ անգամ էլ սիղա կարդացող արհեստակիցներեն, տեսնելով թանգ է առած, հետ են կանգնում, ու չեն ուզում բաժին վեր առնել, նույնպես և վեքիլ եղած գնողներն, տեսնում են էժան են առած, հետ են կանգնում, ուրիշներին բաժին չեն տալիս. էսպես ժամանակներ գանգատ է դուրս գալիս, շարիաղով պետք է վերջանա, սրան էլ խոմ վերջ ու վճիռ չկա, վասնորո և էնպիսի կարգ ու կանոն չկա միասին առնեն, առնելն էլ շատ քիչ կպատահի։

դ) Բայց միայն գտակ կարողներն ունին սովորություն միասին մորթ ընել և երբեմն ոչ թե կապել տալ, այլ ոտն կը խփեն, այսինքն մոտ չեն գնալ մինչև յուրյանց կամոքն և գնովն գնեն. բայց էս չկա որ արգելեն, ո՛չ ոք չգիտե. կը տեսնես, յուրյանք չառան, ուրիշ մինն դուրս եկավ առավ ղրկեց ուրիշ քաղաք։

11, 12. Ասացի ասնաֆներն ո՛չ ինչ կարգադրություն չեն ունեցել և չունին, ըստ որում շարիաղն թույլ չէ տալիս էսպես բաներ անելն, հորմև զրկողություն է դուրս գալիս։

13, 14. Պարսկաստանումն հայք կարող են ոսկերիչ, չախմախսազ, ղոնպաղսազ, դյուլգյար, նաջար, դարբին, և շատ էլ քիչ դերձիկ լինել, որովհետև շարիաղն չէ ներում այլակրոն մարդից էնպիսի բան առնել, որ խայնություն վեր կառնե կամ կը թացանա։ Եթե մին հայ բաղկալություն կամ հացագործություն անե, պետք է միմիայն հայոց վրա ծախել. հայք էլ ուր էժան գտնին, էնտեղ կառնեն, ուրեմն հայ բաղկալն կամ հացագործն չէ կարող պարսիկ խանութպանի նման էժան ծախել։ Ասերք ասեն թե Թարվեզ, 60, 70 տարի հառաջ

հարյուրավոր գերձիկներ կային խանութպանք, բայց այժմ տեսնում ենք 7—8 հոգի հազիվ լինին, էն էլ չուխաչիք են, ռուսաց հրապարակք, որք գինվորականաց հետ ունին առևտուր, սոքա էլ շատ նայող չեն շարիաղին։ Միսն, յուղն խոմ երբեք չէ կարելի քրիստոնեիցն առնել, թեև սատկին ևս։

Թիֆ իգու համբյարի, որպես ասեք, սովորությանց նշխարհաց քանի մի նշաններն կը գտնես Լստեղու հայ արհեստավորների մեջին, էն էլ շատ թույլ։ Գոշկակարի փիրն է Եղիա մարգարեն։ Նաջարի և դուլգարի փիրն հայր Հովսեփն է։ Գերձկինն՝ Ստեփաննոս Նախավկայն. վերո գրյալների մյուսներինն Դավիթ մարգարեն։ Սոցա տոնախմբության օրն յուրաքանչյուրն խանութներիս կը կապեն, որն որ ուստաբաշի է յուրյաց նորա տունն կերթան, կը շնորհավորեն, մատաղ կտրելն և աղքատաց կերակրելն, պատարագ անել տալն, ամեն 4, 5 տարին մին անգամ փող ժողովել. մին շուրջառ կամ սկիհ կամ այլ զարդ եկեղեցվո շինել տալն և պարգևել եկեղեցվո կամ վանորեից, սովորություն կա մինչև ցայսօր, որպէս 70, 80 (ամյա) ծերք ևս վկայեն թե առաջ ևս ավելի լավ էր պահպանեին։ Ունեցել են և ունին ուստաբաշի բայց առանց ազդության և միմյանց հետ էլ այս ասնաֆներն չունին կապակցություն, որպես Թիֆլիզ, թեև օրըստօրե այս սովորությունները կամ ուստաբաշվոց ազդությունն պակասում է, քանզի հառաջ, ասեն, ասնաֆն ուստաբաշի կը ջոկեր, բայց 40, 50 տարի կա կառավարությունն է նշանակում և մին լոկ աստիճան կամ պատվանուն է դառած, զորօրինակ զարգար բաշի, նաջար բաշի, դարզի բաշի և այլն։ Եղած է Լստեղ ևս, որ մին արհեստավոր մեռներ, նորա քարգյարն կը նստեր վարպետի տեղն կը բռներ, մինչև որբերն մեծանային. երբ և խանութն կը վերադարձներ յուր ամեն ասպապովն վարպետի որդվույն, շատ անգամ վաստակի կեսն ևս։ Եվ թե, եթե քարգյարն մեռած վարպետի աղջիկն կառներ, իրավունք չուներ այն դուքանի անունն փոխել, յուր անունն անել, այլ միշտ մեռածի անվամբ կը հիշվեր։ Ունեցել են վարպետ օրհնել և հացկերություն տալ, պետք էր նոր վարպետի կոտիկն կամ յուր վարպետն, թե ծեր էր, կամ ուստաբաշին կապեր կամ այն բանացնելը ասպապն կամ մկրատն կամ ուրագն կամ չաքուչն տալ հացկերության մեջն ձեռքն ու օրհնել ու քահանայն պահպանի, ասեր։ Եթե մին ոսկերիչ հանցավոր էր, ուստաբաշին կը գնար քուրի մեջն բութեն թարս կը ձգեր, և մինչև չպատժեին չէր կարող շուռ տալ. գերձիկի ուստաբաշին դպկյահն կըշրջեր և այլն։ Սոցա պատիժն էր 5-ց10 օր դուքանն կողպել տալ, պատարագ անել տալն և հացկերություն տալն էր ասեն։ Հենց դեղձի դուրս գար, վարպետն մին քանի լիտր կառներ կը բերեր դուքանն, կը տար աշակերտացն. կերան, կիմանային որ այնուհետև գիշերներն պետք է բանին։ Հենց Նովրուզի օրն, այսինքն՝ 10 մարտի եկավ, այնուհետև ազատ էին աշակերտք գիշերներն բանելուց։

15. Որպես ասացի, ասնաֆից կապակցություն չկա, վասն որո և անհնազանդության տերության չեն ցույց տալ։ Կը պատահի մին արհեստի արհեստավորներն քիչանա մին քաղաքումն, այսինքն նորա ձեռագործն էլ գնող չի լինիլ վեր կրնկնի արհեստն, և էն հարկն (մալիաթն) որ ի հարյուրավոր տարիներև, նշանակյալ է նոցա արհեստի անվամբ տերության դաֆտարումն, մոբաշիրն կը պահանջե։ Այն ասնաֆն նախ մոբաշիրին գանգատելով, վկայական կառնեն կամ թե չի կարող տալ ևս, բարձր տեղ կը գանգատին, կամաց կամաց կը հաստանա սոցա բողոքն և ոչ ոք կառավարիչներեն ուշադրություն չի դարձնել, վասնորո և ապստամբությամբ դուրս կը գա և ընդիմություն և կամ կը ժո-

դովվին կերթան մին մեջիթում կամ մուշտեիդի տանն բաստա կը նստեն գիշերներն։ Յա ալլահ կը բղավեն, մինչև որ սոցա բողոքին վերահասու լինին, այսինքն տարեկան մալյաթն քիշացնեն։

16. Ամեն մարդ ազատ է այսօր հացագործ լինել. վաղն կոշկակար, մյուս օրն ոսկերիչ։

17. Ոչ երբեք մուլքադարն բան չունի ասնաֆի հետ. բայց այս կը լինի որ 100, 200 կամ ավելի պակաս դուքան մին շարքումն ընկած մի մարդո է, սկսում է գինն ավելացնել, նոցա միջի նստողներն թե մին արհեստի մարդիք են, հանկարծ երդվում են ու դուրս գնում. էս էլ շատ քիչ կը պատահի։ Կամ թե մին ասնաֆ նստած է մին մարդո կամ շատ մարդո շարքով ընկած դուքաններումն, տերերն մին պատճառ են ունենում կամ փողն չստանալո կամ թե ուրիշ ասնաֆ բերելո և կամ այլ մին բանի համար. և ուզում են նոցա դուրս անել. չեն կարողանում տերության զորովն։ Վասնորո գնում են մուշթեհիդ մոտ ասում, ահա քեզ հայտնում ենք, ով ոք մեր դուքաններումն նստե, առևտուր անե, նամազ բռնե, օրուջ պահե, հարամ է, ըստ որում մեք իզին չենք տալիս։ Մուշտեիդն մարդ է ղրկում բոլոր խանութպաններին իմացումն տալիս, վասն որո և նոքա կամա ակամա պետք է գնան դուքանի տրողներից իզին առնեն։ Թե որ չառնեն հացերնին էլ է հարամ, յուրյանց ընտանիքն էլ պարտավոր են չուտել. նոցա բերած հացն, և էն մարդն, որ դուքաններից բան է առնում, նա ևս ինչ ուտե, խմե, հագնե, հարամ է, ըստ որում հարամ առևտուր անողի ինչից կամ բանից նորա մայի մեջն խառնվեց։

18. Որքան հարց ու փորձ արի, ոչ ոք չկարողացավ ասել, թե ասնաֆի սկիզբն ե՞րբ է եղած, այսքան և եթ ասեն, թե մալյաթ կապելն է սարքված. և ամեն մալյաթն Պարսկաստանի, որ այսօր կա, ասեն Հարուն էլ Ռեշիդ թագավորն է սահմանած։

19. Ի սկզբանն եմ ասած դարուղի, մոհթեսիբի, քալանթարի և քյադխուդի իրավունքն։

20. Պարսկաստան հայոց թաղի կամ գյուղի մեծին, տանուտերին, մելիք կասեն, իսկ մահմետականացն քյադխուդա։

21. Մելիք Սահակն կամ նրանն հառաջ և հետո եղած մելիքներն հայոց՝ միևնույն իշխանությունն են ունեցել քաղաքների կամ գյուղորեից միջին, ինչ որ այժմ պարսիկ մահմետական քյադխուդայք ունեն։ Եթե մահմետական քյադխուդայք միմյանց թաղում բնակող յուրյանց կրոնակից ժողովրդին վրա ազդություն չունին, ուր մնաց հայք մահմետականաց վրա։ Այս միայն քաղաքների հայոց մելիքներն են ունեցած և ունին այժմ ևս, զի հազգասիրությենն կարող են եղած գյուղորեից մելիքներին կամ նոցա ժողովրդին նեղությունը ումից որ հասներ, միջնորդ լինել նոցա գանգատն բարձր տեղ հասցնել, օգնել. չթողնել ղրկողություն լինի նոցա։ Իսպահան մելիք չէ եղած և չկա ևս, այլ քյալանթար էր և է, որ միշտ շահի հետ է ունեցած յուր հարակցությունը, և այժմ բեգլարբեկու կամ տեղվո շահզատի հետ, թեև ոչ որպես հառաջ, ըստ որում առանց վիճակավոր եպիսկոպոսաց ոչինչ չի կարողանում շինել։ Նոյաս և Երևանու մելիքներն մեծ ազդություն են ունեցած, ըստ որում մոտ (են) կաթուղիկոսին և միշտ շահի, շահզատի տեսություն գնալիս հետն են եղած։ Մելիք Սահակն մին ժամանակ մեծ ձայն է ունեցած. բայց, երբ փախավ ռուսաց մեջն և վերադարձավ, փոքր ինչ և թերևս շատ շատ կորցրեց յուր ազդությունը։ Ղարաբաղու մելիքներն ոչ մինին չէին նմանիլ. սորա համ տիրապե-

տող չէին, համ տիրապետող էին, այսինքն յուրաքանչյուրն 20, 30 գյուղեր տուներին, միայն նշանակյալ հարկն կը տային և յուրյանք յուրյանց գլխու մարդ կը սպանեին, կը պատժեին, ձիավոր կը պահեին, դրացի տիրապետողաց կամ հափշտակող ժողովրդին հետ կռիվ կանեին, կերթային կը թալանեին նոցա կայքն, ոչխարն, նախիրն և այլն և այլն։ Շատ անգամ գլխավոր կառավարչին չէին հնազանդիլ, նոցա վրա ևս կռիվ բաց կանեին, հարկն կը զրկեին շահին կամ մերձ գլխավոր կառավարչին զորօրինակ Թարվիզու, Խոյու, Մարաղու, Զազվինու և Երբեմն Ասպահանումն նստող շահին ևս։ Սոցա համար Պարսկաստան Երբեք ոչ կարգ է եղած և ոչ սահման, որպես պատմեն, որպես թե օզրեկք և կախյալ էր, ասեն, յուրյանց զոչաղութենեն և կտրիչութենեն։

Մելիք բառն. գրեթե շատ փոփոխություն է ունեցել, այսինքն Երբեմն զորեղ մելիք հայոց Մարաղայի դուրս եկած, Երբեմն Որմի, Երբեմն Սալմաստ, Երբեմն Խոյ, և յուրաքանչյուրի ուժն ու ազդություններ կամ յուր կտրիչութենեն կամ հարստութենեն կամ լեզվանիութենեն և բանհասկացողութենեն է եղած կախյալ։

22. ա. բ) Նիխրն Պարսկաստան հացի, մսի և բրնձի վրա է։ Սոցա գինն հասարակորեն բեգլարբեկու և քյաղխուդայից խորհրդյամբն կը լինի և կը ներկայացնեն գլխավոր կառավարչին. որ և կը հրամայե ջառ (մունետիկ) քաշել կամ կանչել բազարումն։ Իսկ և իսկ հացագործն թե հացի համար է. յուր խանութումն երկու տեղ ճրագ կը դնի, նույնպես դասապն կամ բաղկալն, որ բրինձ կը ծախե, որպես զի անց ու դարձ անողներն տեսնեն իմանան։

գ) Ցավառներից բերած ուտելյաց համար կշեռքի տակին, այսինքն մեյդանումն, նիխր չկա, բայց երբ թանգություն է, այն ժամանակ երբեմն երբեմն կը լինի։

դ) Փոփոխության ժամանակն դարունն, աշունն և ամառն է. բայց երբ թանգություն է շուտ շուտ է լինում, որպես այս տարի։ Եթե աժան է, խանութպաններն, որ էն բաներովն են առևտուր անում, ժողովվում են բեգլարբեկու մոտ, մին կերպով ավելացնել են տալիս, թե թանգ է, աղքատներն են գնում աղաչում, մինչև աժան նիխր են դնում։

ե) Հայտնի է, որ ամեն տեղ և միշտ դուքանդարի դինն ավելի է քան գմեյդանինն։

զ) Բոլոր Պարսկաստան մեյդան միշտ ցորյան կը բերեն և ազատություն է, Երբեքեցն ով առնե, առնե։

է) Ազատ է ամեն ոք թե բաղկալ թե ալաֆ թե վաճառական գնալ գավառներումն ինչ ուտելիք ուզե ժողովե բերե ծախե կամ պահե։

23. Ի հարկե խանութպանն կը պատժվի, երբ նիխրիցն ավելի գնով ծախե և պատիժն էստեղ է՝ տուժել, ֆալախայումն ծեծել, ականջ ծակել տալ, քաշ ձգել, կտրել և էստոնք բեգլարբեկու պարտավորություն էր հառաջ. այժմ գլխավոր կառավարչինն։

24. Շարիաղով կարող է ամեն ոք յուր ապրանքն աժան կամ թանգ գնով վաճառել և կամ պահել. բայց երբ թանգություն է հացի, պահողն վտանգի մեջ է, ոչ թե ի կառավարութենե, այլ խուժամուժ և լոթի փոթի մարդկանցից, որ հանկարծ կնկա շորերով, վրերնին զաղիֆա ձգած մտնում են բազարն հայ հուանում և ժողովում գլխերնին հաղարավորներ, գնում են թափվում են անբարի վրա, ուր ուտելիք են պահած, որպես այս տարի հունվարին թափեցան շահի հիքիմ բաշու ցորենի անբարի վրա ց 3000 չեթվերտ ցորենն ցրվեցին և տունն

տեղն կողոպտեցին, նույնպես և կառավարչի տունն, որ մարգիկ էր ղրկած պահպանել այս անբարն։ Ի հարկն էսպես ժամանակն շատ անգամ մարդասպանություններ էլ է պատահում։

Ծանորություն։ Մոռացել եմ գրել. Մոնիրեսիրն, արաբ բառ, նշանակն հաշվուտես, վերահասու լինող հաշվի։ Սորա պարտավորությունն է ասնաֆների քաշի և գաղի չափսին նայել, իմանալ նիխրիցն ո՞վ է ավելի գնով ծախսում, իմացումն տալ բեգլարբեկուն, բռնել տալ. նույնպես զգույշ կենալ փողոցի հստակության։ Թեհրան շահն կը նշանակն մոհթեսիբ և կը փոխե. այս մոհթեսիբն կարող է ամեն օր շահն տեսնել և ինչ անց է կենում քաղաքումն իմացումն տալ. բայց ուրիշ քաղաքներումն գլխավոր կառավարիչն կը նշանակե, թեև ոչինչ պատիվ և ազդություն չունի։ Ունի սա փոքր ինչ ոռճիկ թեև ուրախ կը լինի առանց ոռճկի ևս կրել այս անունն. ըստ որում մեծ կաշառք կը ժողովե։

(Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Գեորգ Ախվերդյանի ֆոնդ. II բաժին, վավ. № 203)։

ПЕРЕПИСКА Г. АХВЕРДЯНА И Г. ШИРМАЗАНЯНА ПО ВОПРОСУ ОБ АМКАРСТВАХ В ГРУЗИИ И ПЕРСИИ

А. Г. ИОАННИСЯН
Академик АН АрмССР

(Резюме)

Публикуемая здесь переписка относится к 1857 г. и была начата в связи с обсуждаемым в руководящих сферах кавказского наместничества вопросом о ликвидации тифлисских амкарств. Желая убедить высшую администрацию края в полезности амкарств и несвоевременности их ликвидации, Г. Ахвердян (Ю. Ахвердов) приступил к составлению своих известных докладных записок наместничеству, впоследствии изданных под общим заглавием «Тифлисские амкары». Для выяснения вопроса о происхождении и общественно-политической роли амкарства автор записок счел необходимым получить от известного армянского деятеля и знатока Персии Галуста Ширмазаняна, проживавшего в то время в Тавризе, ряд сведений о правах и обязанностях персидских аснафств. В своих представляющих ныне большой научный интерес письмах, отвечая на поставленные Ахвердяном конкретные вопросы, Ширмазанян дает подробные разъяснения о бытовавших в то время в Персии аснафских должностях и учреждениях, об их роли в экономической жизни страны и об их связях с органами государственной власти.

Во вводной статье говорится о генезисе и развитии персидских аснафств и закавказских амкарств. Занимаемая в записках Ахвердяна точка зрения манченстрианства исходила из интересов армянского торгового капитала в Закавказье и по существу направлялась против колониальной политики царизма. Автор статьи возражает против точки

зрения некоторых советских исследователей (С. Зурабян, Х. Гуланян и Ш. Месхиа), считавших Ахвердяна и его ближайшего единомышленника П. Шаншиева «мелкобуржуазными мыслителями» или характеризовавших их политико-экономическую позицию как позицию «мелкобуржуазного романтизма».